№ 122 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 6

1908

ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 6 № 122

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ
Ամսական մէկ րուբլի
Ամերիկա տարեկան . 6 դօլար
Եւրօպա » . . 30 ֆրանկ
Պարսկաստան » . 10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել . . . . 40 կոպ.

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ
Կարսի երկաթուղու գծի վրա, Համամլի գիւղում
ԲԱՑՎՈՒՄ Է
✠ ԱՄԱՐԱՅԻՆ ՋՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ ✠
ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՋՈՒԼՀԱԿՈՒԹԵԱՆ
Ընդունվում են երկու սեռի անձեր առանց պարտադիր կրթական ցենզի։
Նախնական տեղեկութիւններ կարելի է ստանալ Թիֆլիսում՝ Ա. Քալանթարից (Գրիբոյեդովսկայա № 5), իսկ Համամլիում՝ ինստրուկտոր Մ. Սողոմոնեանից։
Աշակերտների համար կը հոգացվի հանրակացարան գիւղում և ըստ հնարաւորութեան էժանագին ճաշ։ 3—2

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ
(Կիրօչնայա փող.)
Ուրբաթ, յունիսի 6-ին
կը կայանայ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
Ի. Ֆ. ՍԵՄԵՕՆՕՎԻ
«Լէօնիդ Անդրէևի ստեղծագործութեան մոտիվները»։
Դասախօսութեան արդիւնքը կը յատկացվի կոմս Լ. Ն. ՏՕԼՍՏՕՅԻ անունով հրատարակվելիք կովկասեան յօբելեանական ժողովածուի հրատարակութեան ֆօնդին։
Մուտքը արժէ՝ 40, 30, 20 և 10 կոպ.։
Տոմսակները ծախվում են ժողովրդական տան կասսայում։
Սկիզբն է երեկոյեան ժամը 6½-ին
տռ. 1—1

Հրաւէր
Զգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցու հոգաբարձութիւնը հրաւիրում է յարգելի ծխականներին շնորհ բերել առաջիկայ կիրակի, յունիսի 8-ին, ժամը 12-ին, պատարագից յետոյ, երկրորդ և վերջին ընդհանուր ծխական ժողովի՝
1) քննելու հոգաբարձութեան հրաժարականի շարժառիթը.
2) ընտրելու 4 նոր հոգաբարձուներ՝ Փոխարքայից տրված ժամանակաւոր կանոնների 2-րդ կէտի համաձայն։
Առանձին հրաւիրաթղթեր չեն ուղարկվելու։
(ու. կ.) տռ. 2—2

Բեհբութեան փողոց, № 23
ՏՐՎՈՒՄ Է
ամառվայ ամիսները
4 ՍԵՆԵԱԿ
ամեն յարմարութիւններով. կարելի է և կահաւորված.
ամսական 25 րուբլով
(ա.) 3—3

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

VI *)

Ինչպէս ցոյց տուինք մեր նախորդ յօդուածի մէջ, Փոխարքան, ի կատարումն 1905 թ. օգոստոսի 1-ի Բարձրագոյն Ուկազի, հաստատեց մի առանձին դպրոցական յանձնաժողով, նախագահութեամբ պ. Հակկէլի, որին պաշտօն տուեց քննել ամենայն հայոց կաթողիկոսի առաջարկած ծրագիրը և կազմել ծրագիր ընդհանուր կանոնադրութեան հայոց եկեղեցական-ծխական դպրոցների համար։

Այդ յանձնաժողովը, որ արդէն աւարտել է իր պարապմունքը, իր քննութեան առարկայ դարձրեց երեք ծրագիրներ—1) ամենայն հայոց կաթողիկոսի առաջարկած ընդհանուր ծրագիրը, բաղկացած 3 կէտերից, որի հիմնաքարը կազմում է հայոց եկեղեցական դպրոցների կատարեալ աւտօնոմիան և հանրակրթական բնաւորութիւնը, 2) Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու, ուրեմն ռուսաց ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ներկայացուցիչ պ. Բուդոլֆի ծրագիրը, որ հիմնաքարը կազմում է ժխտումն և հերքումն աւտօնոմիական և համակրթական որևէ բնաւորութիւն հայոց դպրոցների և ձգտումն դարձնել նրանց լոկ ստորին ծխական դպրոցներ, 3) ծրագիր, կամ աւելի ճիշտ է ասել հակա-ծրագիր Ալ. Քալանթարի, որ ձգտում է հնարաւորութեան չափ պահպանած լինել որոշ չափով հայոց եկեղեցական դպրոցների աւտօնոմիական և համակրթական բնաւորութիւնը։

Քննելով այդ երեք ծրագիրները, սկզբում մասնակցութեամբ կաթողիկոսական ներկայացուցիչների, իսկ յետոյ առանց նրանց մասնակցութեան, դպրոցական յանձնաժողովը մշակել է արդէն մի ծրագիր, որ Փոխարքայի խորհրդարանում քննվելուց յետոյ, պէտք է ուղարկվի Պետերբուրգ, ենթարկելու Պետական Դումայի վերջնական քննութեան և հաստատութեան։

Ուրեմն, մեզ անհրաժեշտ է ամենից առաջ ծանօթանալ երեք ծրագիրների հետ և ապա յանձնաժողովի մշակած ծրագրի հետ։

Կաթողիկոսի ծրագիրը մենք անցեալ անգամ բերինք ամբողջութեամբ։

Այսօր առաջ ենք բերում հոգաբարձու պ. Բուդոլֆի ծրագիրը։

Կանոնադրութիւն եկեղեցական - ծխական դպրոցների, բացվող հայ-լուսաւորչական հոգեւորականութեան ձեռքով 1874 թ. յուլիսի 19-ի կանոնների հիման վրա։

I. Հայ-լուսաւորչական հոգևորականութեան ձեռքով հաստատվող և կառավարվող հանրակրթական եկեղեցական-ծխական ուսումնարանները կազմվում են միդասարանեան կազմով՝ չորսամեայ կուրսով, և երկդասարանեան կազմով՝ վեցամեայ կուրսով, այնու, որ վերջին 5 և 6-րդ տարիները վերաբերում են երկրորդ դասարանին, իսկ առաջին 4-ը՝ կազմում են միդասարանեան ուսումնարան։

Ծանօթութիւն առաջին.—Վերոյիշեալ կրթական հաստատութիւնները կարող են բացվել նաև տեղական պայմաններին նայելով, կամ միայն առաջին դասարանի (ուսման երկու տարվայ) առաջին երկու բաժանմունքների կազմով, կամ երկդասարանեան ուսումնարանի վերջին երկու բաժանմունքների, այն է միայն երկրորդ դասարանի կազմով։

Ծանօթութիւն երկրորդ. — Եկեղեցական-ծխական ուսումնարաններին կից, ուր կարելիութիւն կը լինի, կարող են կազմակերպվել զանազան տեսակի պրօֆէսիօնալ բաժանմունքներ, համաձայն այն կանոնների, որոնք գոյութիւն ունեն դրանց մասին ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան նախնական դպրոցներին կից։

II. Դասատուութիւնը եկեղեցական-ծխական ուսումնարանների մէջ կատարվում է համաձայն 1874 թ-ի յուլիսի 19-ի կանոնների, այնու, որ ուսման պլանը և դասատուութեան պրոգրամները սահմանվում են հայ-լուսաւորչական հոգևորականութեան ձեռքով և միայն այն մասը, որ վերաբերում է ռուսաց լեզուի, Ռուսաստանի աշխարհագրութեան և պատմութեան դասատուութեան—սահմանվում է նախապէս համաձայնութիւն կայացնելով ժողովրդական լուսաւորութեան վարչութեան հետ։

Ուսման պլանը և դասատուութեան պրոգրամները հաստատվում են Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի կողմից։

III. Դասագրքերի և ուսման ձեռնարկների ընտրութիւնը կատարում է հայ-լուսաւորչական հոգևորականութիւնը, համանման տիպի կրթական հաստատութիւնների համար ընդհանուր հիմունքներով հաւանութիւն գտածներից։

IV. Եկեղեցական-ծխական ուսումնարանների ուսուցչական մարմինը կարող է ընտրվել միայն այն անձանց թւից, որոնք ունեն համապատասխան կրթական ցենզ և ռուսաց հպատակութիւն, այնու որ ռուսաց լեզուն, Ռուսաստանի աշխարհագրութիւնը և պատմութիւնը աւանդող վարժապետները և վարժուհիները պէտք է ունենան վկայական ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան տարրական ուսումնարանների վարժապետի կամ վարժուհու կոչումից ոչ նուազ։

V. Ուսուցչական մարմին թոյլատրելը դասաւանդութեան՝ կատարվում է ընդհանուր հիմունքներով—ա) կրօնուսոյցներին—հայ-լուսաւորչական եկեղեցու իշխանութիւնն է թոյլատրում, քահանաների պաշտօնների փոխարինման կարգով, 2) վարժապետներին և վարժուհիներին—նոյն իշխանութիւնը՝ նախապէս համաձայնվելով ուսումնարանական վարչութեան տեղական օրգանների հետ։

VI. Եկեղեցական ծխական ուսումնարանների մէջ ռուսաց լեզուի, Ռուսաստանի աշխարհագրութեան և պատմութեան դասատուութեան ղեկավարութիւնը և հսկողութիւնը, համաձայն 1874 թ. յուլիսի 19 ի կանոնների, ընկնում է ուսումնարանական վարչութեան պարտականութեան վրա և կատարվում է սահմանեալ կարգով։

VII. Եկեղեցական ծխական դպրոցները բացվում են հայ-լուսաւորչական հոգևորականութեան ձեռքով Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի թոյլտուութեամբ։

VIII. Այժմ գոյութիւն ունեցող հայ-լուսաւորչական ուսումնարանների մէջ կազմակերպութեան սահմանումը, համաձայն ներկայ կանոնադրութեան համապատասխան յօդուածների, կատարվելու է յաջորդաբար մի տարվայ ընթացքում, գործադրութեան օրից։

Հոգաբարձու Բուդոլֆի այս ծրագիրը, անշուշտ, չէր կարող ընդունվել կաթողիկոսական ներկայացուցիչների և նրանց կողմից, որոնք ճանաչում էին այն սկզբունքը. թէ հայոց եկեղեցին վայելել է միշտ որոշ չափով ինքնավարութիւն դպրոցական ծխական գործերի մէջ. ուստի և այդ ծրագիրը գտաւ խիստ դիմադրութիւն։

Եւ ահա, որոշ չափով հաւասարակշռութիւն պահպանելու համար պետական իրաւունքների և այդ ինքնավարութեան մէջ, պ. Ալէքսանդր Քալանթար, խորհրդակցութեամբ ձեռնհաս անձանց հետ, կազմեց մի հակածրագիր, որ նոյնպէս քննվեց յանձնաժողովի մէջ։

Յաջորդ անգամ կը բերենք այդ հակածրագիրը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 4 յունիսի

«Times»-ին հաղորդում են Թէհրանից յունիսի 3-ին, որ մէջլիսի նախագահը և 6 պատգամաւորներ ներկայացան շահին և յանձնեցին նրան յունիսի 1-ին կազմած յուշագիրը։

Շահը արտասանեց մի երկար և կրակոտ ճառ, որով շեշտեց, որ նրա պապերը գահը ձեռք են բերել սրով և նա մտադիր չէ բնաւ իր ժառանգութիւնը կորցնել առանց սրին դիմելու։

Արձակելով պատգամաւորութեան, շահը խոստացաւ յունիսի 4-ին ուղարկել իր գրաւոր պատասխանը։

Զօրքերը այսօր աշխատեցին բանալ տալ շուկաները, բայց նրանց բոլոր ջանքերը ի դերև ելան. չը նայած շահի հրատարակած կոչին, որով սպառնում է կրպակատէրերին գրաւել նրանց գոյքը, կրպակները գոց պահելու դէպքում, վերջիններս չը բացվեցին։ Յունիսի 2-ին ձերբակալվեց նացիօնալիստների պարագլուխ Սուլէյման. Նորանոր ձերբակալութիւնների են սպասում։ Պարլամենտական կուսակցութեան ոյժերը թուլանում են։ («Հ. Գ.»)

—

Լօնդօն, 4 յունիսի

Համայնքների պալատում, պատասխանելով ուղղված հարցապնդման, Գրէյը ասաց, որ, անգլիական հաւատարմատարի տեղեկութիւնների համաձայն, Թէհրանում տիրում է մեծ յուզմունք և անհանգստութիւն, սակայն հաւատարմատարը չէ հաղորդում, որ օտարազգիների կեանքին, գոյքին և շահերին վտանգ է սպառնում։ («Հ. Գ.»)

—

Ալէքսանդրօպօլ, 4 յունիսի

Յունիսի 3-ի երեկոյեան, չեղած ահագին հեղեղից յետոյ, քաղաքը ծածկվեց շրջակայքից թափվող ջրերով։ Կենտրոնական փողոցներում կազմվեցին ալեկոծ գետակներ։ Ջուրը տարաւ շատ տներ։ Կան մարդկային զոհեր։ Նիւթական վնասը չափազանց մեծ է։ Քաղաքի ազգաբնակութեան, մանաւանդ առանց այն էլ աղքատ մասի դրութիւնը շատ բաներում անելանելի է։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 4 յունիսի

Պետ. հեռ. գործ. տեղեկութիւնների համաձայն, որոնք բղխում են միանգամայն արժանահաւատ աղբիւրից, կովկասեան սահմանագլխում պարսիկ քոչւորների՝ շահսէվանցիների ձեռքով կատարված ռոտմիստր Դվօէգլազովի և սահմանապահ զօրախմբի զինւորներից մի քանիսի սպանման գործը Կովկասի Փոխարքան վերջացած է համարում։ Քոչւորները կատարել են գեներալ Սնարսկու միջոցով ներկայացված պահանջների գլխաւոր կէտերը։

Այդպիսով գեներալ Սնարսկու զօրախմբի վրա դրված պարտականութիւնը վերջացած ընդունելով, կոմս Վօրօնցօվ-Դաշկօվը կարգադրել է զօրախմբին վերադառնալ Թիֆլիս։

Մեր ամենագլխաւոր պահանջներից մէկի՝ դրամական վնասները հատուցանելու վերաբերութեամբ տեղեկութիւն է ստացվել, որ սկզբում ստացված 50,000 րուբլուց բացի՝ մնում է վճարել մի որոշ գումար դատաստանական պահանջների համար, որպիսի գումարը վճարելու համար շահսէվանցիներին տրված է մի տարի ժամանակամիջոց։ Բացի դրանից, պարսից կառավարութիւնը դրականապէս յայտնել է մեր դեսպանին, որ Դվօէգլազովին՝ արդէն ձերբակալված սպանողները մահվան պատիժ կը ստանան։ Տեղում սրա վրա հսկելու գործը յանձնված է Արդաբիլի ռուսաց հիւպատոսարանի կառավարչին։ («Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 4 յունիսի

Տեղեկութիւն է ստացվել, որ մայիսի 30-ին թիւրքական մի զօրավաշտ գրաւել է Չախրիս-Կալա բերդը, որ կարևոր ռազմական նշանակութիւն ունի և գտնվում է Սալմաստից 25 վերստ հեռաւորութեան վրա։

Ուրմիայի հետ հեռագրական հաղորդակցութիւն կրկին չը կայ։

Անջումաններում գրվել են 1500 կամաւորներ, որոնք միւսների հետ մտնելու են Թէհրան և կռիւ յայտարարելու շահի կառավարութեան դէմ։ («Հ. Գ.»)

—

Մայիսի 29-ին սինօդը մասնաւոր տեղեկութիւն է ստացել Վլադիկավկազից և Թիֆլիսից, որ ոստիկանութիւնը արդէն երևան է հանել Վրաստանի էկզարխ Նիկոնին սպանողների հետքը։

Ասում են, որ այդ ոճիրը կատարել է չարագործների մի ամբողջ խումբ, որը անկարող է եղել հետքը բոլորովին ոչնչացնել։

Շատ յամառաբար և հաստատ կերպով լուր է պտտում, որ սպանութեան նպատակն է եղել պրօվօկացիա սարքել՝ ձգտելով այդ ստոր միջոցով պաշտօնից հեռացնել տալ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվին և միանգամից տապալել Կովկասը կառավարելու ներկայ սիստեմը։

Սպանութիւնը, «Пет. Л.» լրագրի ասելով, նպատակ է ունեցել ապացուցանելու, որ տեղական իշխանութիւնը քայքայված է և անընդունակ է այլևս մաքառել յեղափոխական բռնկումների դէմ։ («Б.»)

—

Ամստէրդամ, 4 յունիսի

«Հանդելսբլադ» թերթին հաղորդում են Բատավիայից, որ Սումատրայի արևմտեան ափին խոշոր անկարգութիւններ ծագեցին նոր հարկ մտցնելու պատճառով։ 90 հոգի սպանված են և վիրաւորված։ Զօրքերը կորցրին 4 սպանված և 13 վիրաւոր։ («Հ. Գ.»)

—

Մօգիլէվ (նահանգական), 4 յունիսի

Քաղաքացիական կլուբում ակցիզային վերահսկիչ Կլեատէցկին, պաշտպանվելով, սպանեց ատրճանակով ազնուական Վլադիմիր Կիգնային, որ գրում էր Դէգլօվ կեղծանուան տակ։ («Հ. Գ.»)

—

Բեռլին, 4 յունիսի

Պրուսական լանդտագի ընտրութիւնները վերջնականապէս տուին հետևեալ արդիւնքը. 152 պահպանողականներ, 53 անկախ պահպանողականներ, 64 նացիօնալ-լիբէրալներ, 28 հոգի ժողովրդական ազատ մտածող կուսակցութիւնից, 105 հոգի կենտրոնից, 15 լեհեր, 6 սօցիալ-դեմօկրատներ, 2 դատչանիներ, 3 անկուսակցականներ։

Բեռլինի Մոաբիտ շրջանում պէտք է տեղի ունենայ կրկնաքուէարկութիւն։ («Հ. Գ.»)

—

Դվինսկ, 3 մայիսի

Յունիսի լոյս 1-ի գիշերը սկսված հրդեհին ճարակ դարձան 300 տներ։ Ամբարտակով հազիւ հնար եղաւ կրակի առաջը կտրել և քաղաքի կենտրոնական մասերը նրանից ազատ պահել։ Հրդեհաշէջների խմբեր կանչվեցին հարևան քաղաքներից, որոնց թւում և Վիլնայից։ («Հ. Գ.»)

—

Խռովութիւնները Պարսկաստանում օր ըստ օրէ ֆանտաստիքական չափեր են ընդունում. շարժումը գնալով ընդարձակվում է, իսկ ամենայն օր ստացվող տեղեկութիւնները պատկերացնում են պարսից կառավարութեան ծանր դրութիւնը։ Ներկայ շահը թոյլ կամքի տէր մի մարդ է, մինչդեռ իրերի դրութիւնը այնպէս է, որ պահանջվում է պարսից կառավարութիւնից եռանդուն և կտրական միջոցներ։ Եւ շատ հաւանական է, որ շահը, իրան անզօր զգալով այդ ահռելի անցքերի առաջն առնելու, գերադասել է մի առ ժամանակ հեռանալ։ Շահի հեղինակութիւնը ընկնում է նկատելի կերպով և արդէն խօսում են նրան գահընկէց անելու մասին, իսկ մանկահասակ գահաժառանգին գահ նստեցնելով՝ անհրաժեշտ կը լինի նշանակել ռեգենտ։ Ներկայ շահը իր թոյլ բնաւորութեան հետ միասին խիստ յամառութիւն ունի և կողմնակից է բռնակալութեան, որը վարկաբեկ է անում նրան պարսիկ ժողովրդի լայն խաւերում։ Այդ պատճառով հազիւ թէ Պարսկաստանի մէջ բռնկված խլրտումները կարողանան խաղաղ ճանապարհ հարթել իրանց համար և խաղաղութեամբ վերջանալ։

Յամենայն դէպս դրութիւնը միանգամայն կրիտիքական է այնտեղ։ Շահի փախուստի լուրը բոլորովին պարզված չէ դեռ ևս

---

*) Տես «Մշակ» № 113

Պաշտօնական բացատրութիւնը այսպէս է, որ Պարսկաստանի պետը, տեղեկանալով իր դէմ պատրաստւող նոր դաւադրութեան մասին և երկիւղ կրելով նոր մահափորձից, ուժեղ պահակների ուղեկցութեամբ գնացել է քաղաքից դուրս գտնւող Շահի-բաղը:

Գերմանական մամուլը յամառաբար տարածում է այն լուրը, որ շահը թաքնւել է ռուսական դեսպանատանը, սակայն այդ լուրը անհաւանական է հէնց այն տեսակէտից, որ մի այդպիսի քայլ պարլամենտի մեծամասնութեան համար հաւասարազօր է իրան Ռուսաստանի վասալը ընդունելուն, որը, ի հարկէ, լուրջ բացատրութիւնների տեղիք կը տար:

Մինչդեռ Պարսկաստանը ներկայումս առանց այն էլ կրիտիքական րօպէներ է վայելում: Կառավարութիւնները փոխւում են համարեա շաբաթէ շաբաթ. այժմեայ մինիստրութիւնը հրաժարական է տւել, նոր կաբինետը դեռ ևս կազմւած չէ, երկրում անիշխանութիւն է տիրում, շահը վարկաբեկ է եղել, Նրա մայրաքաղաքի պատերի վրա ամենայն օր Թուղթիկներ են կպցնում և սպառնում են նրան գահընկէց անել կամ սպանել: Քաղաքական կլուբները, չը բաւականանալով նրանով որ շահը արձակեց իրան անհաճոյ խորհրդականներին, պահանջում են այդ վերջիններին աքսորել: Այդպիսի պայմաններում պետութիւնների ներկայացուցիչների համար—յատկապէս Անգլիայի և Ռուսաստանի համար—միակ խոհեմութիւնը կը լինի նպաստել մտքերի խաղաղմանը, աշխատելով լուրջ բարդութիւնների առաջն առնել, որոնք և անում են:

Ինչպէս յայտնի է, շահը իր հետ տարել է նաև իր աւագ որդուն—գահաժառանգին:

«Neue Freie Presse» լրագիրը այդ քայլը բացատրում է երկիւղով, որ մի գուցէ ժողովուրդը, գահընկէց անելով իրան, շահ հրատարակէ երիտասարդ գահաժառանգին և երկրի կառավարութեան ղեկը յանձնի մի խելօք և ուժեղ ռեգենտի: Ըստ երևոյթին այդ դիտաւորութիւնը ցանկալի կը լինէր ոչ միայն դաւադիրների, այլ և մէջլիսի համար, մանաւանդ որ ռեգենտութիւնը Պարսկաստանի համար նոր երևոյթ չէ. ներկայ շահի պապ Նասր Էդդինը գահ բարձրացաւ 15 տարեկան հասակում, և նրա փոխարէն երկիրը կառավարում էր ռեգենտը:

Պարսկաստանի գործերին լաւածանօթ Բուդապեշտի պրօֆէսօր Վամբերին այդ բոլոր դէպքերի մեղաւորը համարում է իրան՝ շահ Մահմադ-Ալիին, իսկական բռնակալին, ո՛չ իր կամքի հակառակ հնազանդւեց սահմանադրութեան, առանց սակայն հրաժարվելու իր անսահման իշխանութիւնը վերականգնելու համար յեղաշրջում առաջացնելու մտադրութիւնից:

Համակրութիւն չէ վայելում, Վամբերիի ասելով, ո՛չ միայն շահը, այլ և Ղաջարների ամբողջ ցեղը, որի մէջ կան խելօք ու տաղանդաւոր վարչական անձեր, ինչպէս օրինակ շահի եղբայր արքայազն Մուզաֆֆէր-Էդդինը, բայց նրանց մէջ չը կայ ոչ մէկը սահմանադրութեան կողմնակից:

Վամբերին, ինչպէս և Պարսկաստանի դրութեան մասին բոլոր գիտողութիւն անողները, համոզւած է, որ Պարսկաստանի ճակատագիրը լիովին գտնւում է Անգլիայի, իսկ աւելի ևս Ռուսաստանի ձեռքում, որովհետև նա մեծ համարումն ունի ամբողջ երկրում և որ ռեվելեան տեսակցութիւնը նրա համար կարող է վճռական նշանակութիւն ունենալ: («С. С.», «С.»)

—

Թէհրանից հաղորդում են «Каспій» լրագրին.

Ռուսաստանի և Անգլիայի դէմ թշնամացած անջումանները, ինչպէս հաղորդում են, մտադիր են հովանաւորութիւն որոնել գերմանական դեսպանութեան մէջ, հաւատացած լինելով որ Գերմանիան պաշտպան կը հանդիսանայ Պարսկաստանին, կը պաշտպանէ նրա անկախութիւնը և միջոցներ ձեռք կառնէ երկրի սահմանադրութիւնը հաստատելուն:

Ժողովուրդը ծանր մեղադրանք է բարդում Էմիր-Բահադուրի վրա, որը, իբր թէ, դեռ ևս Մուզաֆֆէր-Էդդին շահի կենդանութեան ժամանակ թիւրքական կառավարութեանն է յանձնել թիւրք-պարսկական սահմանագծի որոշման դաշնագիրը, որ կազմւած էր 1861 թւին և պահւում էր քաղաքից դուրս գտնւող Փարրախ-Աբադի պալատում:

Անգլիացիները, ինչպէս խօսում են, առաջարկել են գերմաններին Հնդկաստանում 60,000 քառ. մետր հող ձրի, եթէ որ նրանք ցանկանան տեղափոխւել այնտեղ ապրելու:

Մեծ ոգևորութիւն է նկատւում այն պարսիկ երիտասարդների մէջ, որոնք եւրոպական կրթութիւն են ստացել թէ այստեղ և թէ Եւրոպայում: Նրանք բաց են արել և շարունակում են բանալ բազմաթիւ ձրի դպրոցներ, երեկոյեան և կանոնաւոր մասնագիտական դասընթացներ, ուր դասաւանդում են նոյն երիտասարդները:

Արժանահաւատ աղբիւրից լսում ենք, որ մայիսի 21-ին (հ. տ.) ռուսաց և անգլիական դեսպանները այցելել են արքայազն Ազադ-էլ-Մուլքին, որի տանը հաւաքւել են գործադուլարար օֆիցէրները, պաշտօնեաները և «բուզուրգօնները» և իրանց կըշտամբանքն են յայտնել այն բանի համար, որ նա, օթևան տալով ցուցարարներին, նպաստում է այն անարխիային, որը առանց այն էլ բռնել է ամբողջ երկիրը: Ղաջարների ցեղի աւագը, առարկելով նրանց կշտամբանքներին, իր հերթին մատնանիշ է արել դեսպաններին, որ անհնարին է պաշտպանութիւն ցոյց տալ այն անձանց, որոնք անպայման վնասակար են երկրի համար:

Շահի մզկիթում բաստ նստած գործադուլարար զինւորներին Թէհրանի իմամ Ջուման խոստացել է իր հաշւով կերակրել՝ տալով նրանց ամենայն օր փլաւ, մինչև որ նրանք իրանց ռոճիկները կը ստանան:

Իսլամի օրէնքներով պոռնկութիւնը գոյութիւն չը պէտք է ունենայ: Իրաւաբանօրէն հասարակական տեմպերամենտի զոհերը օրէնքից դուրս են համարւում, և ահա այդ անելանելի դրութիւնից օգտւում են քաղաքի վարչական զանազան մութ անձինք շահագործելու այդ թշուառ արարածներին: Այդ դրութիւնից ազատւելու նպատակով Թէհրանի պոռնիկները դիմելով մէջլիսին խնդրել են առանձին մի թաղ յատկացնել իրանց և օրէնք հրատարակել, որին նրանք ենթարկվէին, մի խօսքով միջոցներ ձեռք առնել իրանց կենցաղը կանոնաւորելու:

Մի քանի օր առաջ կառավարչական բարձրագոյն պօլիտեխնիկական «Դար-Ուլ-Ֆունուն» դպրոցի բոլոր պարսիկ ուսուցիչները (որոնցից շատերը եւրոպական բարձր կրթութիւն են ստացել) գործադուլ են արել այն պատճառով, որ նրանց վաղուց արդէն ռոճիկ չեն տալիս, մինչդեռ օտարերկրացի ուսուցիչները, պաշտպանութիւն գտնելով իրանց դեսպանատների կողմից, կանոնաւոր կերպով ստանում են իրանց ահագին ռոճիկները: Մեղքը գցում են ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարչի վրա, որը, իբր թէ, ստացել է փողերը, բայց ինչ որ պատճառով բաւարարութիւն չէ տւել տեղացի ուսուցիչներին: Նրանք տրտնջում են նոյնպէս և այն բանի դէմ, որ նոյն մինիստրութիւնը տասնեակ տարիներ շարունակ դարձել է Մուխբիրօֆների ընտանիքի մենաշնորհը, որոնցից և ընտրւում են մինիստրները: Այդ ցեղը այնչափ մեծ է և այնքան լաւ համախմբւած, որ ամեն տեղ իր անդամներն ունի՛ և՛ մէջլիսում, և՛ մինիստրութեան կազմի մէջ, այնպէս որ ուրիշ ոչ մի թեկնածու չէ կարող ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պորտֆելը ստանալ:

—

Ուրմի, 21 մայիսի

Եթէ հաշւի չառնենք մանր մանր դէպքերը, առայժմ դադարած պէտք է համարել քիւրդական աւարառութիւնները:

Առայժմ հանգիստը, եթէ միայն հանգիստ կարելի է ասել, ստեղծեցին իրանք գիւղացիները:

Նրանք իրանց անձնական միջոցներով ասպատակիչների գրոհներին դիմադրել չը կարողացան: Կառավարութիւնը, անջումանը, գիւղատէրերը նոյնպէս չը կարողացան թէ՛ գլացան օգնել: Կամայ ակամայ, ի մեծ ուրախութիւն քիւրդերի մեծ վարժապետ սուլթանի, գիւղացիները ընդունեցին Թիւրքիայի հպատակութիւնը:

Սրանից էլ լաւ բան...

Հպատակութիւն են ընդունել Բարան-Դուզի՝ 60, Դոլի՝ 18, Սլդուզի՝ 120, Ուշնիի՝ 60, Լահիջանի՝ 100, Դեշտ Ուրէլի՝ 40, Մարգևարի՝ 59, Դեշտի՝ 55 և Բրադօստի 60 գիւղերը:

Մնում է Սօմայը: երևի նրանք էլ կը հետևեն հարևանների օրինակին:

Բոլոր այս գաւառակներում զբաղւում են երկրագործութեամբ:

Ցորեն, գարի և հացահատիկի որ տեսակն ուզում էք վերցրէք, ամենապակաս չափը մէկին 10, իսկ ամենաշատը 15, 20 և կան տեղեր՝ աւելի արդիւնք են տալիս:

Թիւրքիայի ամենքին յայտնի հարկերի անօրինակ ծանրութիւնից չը սարսափելու համար, հպատակութիւն ընդունողներին խոստացել են ապահովութիւն գոյքի, կեանքի և հարկերի եօթն տարւայ ազատութիւն:

«Որ ունեցի ականջս լսելոյ, լուիցէ», բայց մի հաւատացէ...

Դրութեան մակընթացութեան շրջանն է այս: Ջը գիտեմ ինչքան հանգիստ կը վայելեն թշուառ գիւղացիները, եթէ երբևիցէ տեղի ունենայ տեղատւութիւնը:

Արգար Տէր-Եսայեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԴԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԿԵՆՏ. ԸՆԴ. ԺՈՂՈՎԸ

—

Յունիսի 5-ին, առաւօտեան ժամը 10-ին, Գայիանեան դպրոցի դահլիճում նշանակւած էր Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միութեան կենտրոնական ընդհանուր ժողովը:

Նիստը բացվեց նշանակված ժամից բաւականին ուշ՝ Ս. Զօհրաբեանի նախագահութեամբ:

Նախ և առաջ կարդացվեց կենտրոնական վարչութեան գործունէութեան տեղեկագիրը սկսած 1907 թւի հոկտեմբերի 14-ից մինչև 1908 թւի յունիսի 1-ը:

Այդ տեղեկագրի մասին առանձին ոչինչ չենք տալիս, որովհետև շուտով նա տպագրվելու է միութեան օրգան «Նոր Դպրոցի» մէջ:

Այնուհետև սկսւում են թէր ու դէմ վիճաբանութիւններ տեղեկագրի շուրջը: Ժողովի ամենագլխաւոր զբաղմունքի նիւթ դարձան մանկավարժական դասընթացները:

Վարչութեան տուած բացատրութիւններից երևաց, որ դասընթացները կազմակերպելու համար անհրաժեշտ է ունենալ 1500 րուբլի, որ միութիւնը իր միջոցներով, մանաւանդ օրգանը հրատարակելուց յետոյ, չէ կարող լրացնել: Եղել են դիմումներ հայոց բարեգործական ընկերութեանը, որը յատկացրել է 300 րուբլի, կուլտուրական միութեանը, որ առայժմ չէ պատասխանել, և մի անյայտ անձի, որ խոստացել է տալ 300 ր.: Այդպիսով միութիւնն իր տրամադրութեան տակ ունի միայն 600 րուբլի, որը մասամբ կարող էր բաւարարութիւն տալ: Սակայն պարզւում է մի հանգամանք, որ վարչութիւնը դիմումներ է արել դասընթացները կազմակերպելու նպատակով մի քանի հայ դասախօսների ու մասնագէտների, որոնք սակայն հրաժարվել են իրանց վրա յանձն առնել: Այնուամենայնիւ բացատրութիւններից ու վիճաբանութիւններից պարզւում է, որ ժամանակի սղութեան պատճառով վարչութիւնը ուրիշ դասախօսների դիմումն չէ արել:

Այդ ի նկատի առնելով՝ անհնարին է եղել իրագործել մանկավարժական դասընթացների կազմակերպման գործը: Ոմանք հարց են զարթեցնում, որ կարելի էր տեղական օտար՝ ռուս ուժերի դիմել, որը սակայն վարչութիւնը թէև չէր արել, բայց պատճառաբանում էր, որ չը կան այդպիսի ուժեր:

Առաջարկութիւններ են լինում—քանի որ չը կան մասուր ուժեր և քանի որ ուշ է և շոգ ժամանակը—այս ամառ կազմակերպելու միտքը թողնել, որոշել եկող տարւայ համար: Երկար թէր ու դէմ վիճաբանութիւններից յետոյ ժողովը քուէարկութեամբ ընդունեց 24 ձայնով, 36 ներկայ եղողներից, Ա. Աբեղեանի հետևեալ բանաձևը.

«Ի նկատի առնելով այն հանգամանքը, 1) որ միութեան վարչութեան դիմումին մերժողական պատասխան է տուել հայ դասախօսների մեծամասնութիւնը և այդպիսով անհնար է միայն հայ մասնագէտների ուժով կազմակերպել դասընթացները, 2) որ նոյնը կարող է տեղի ունենալ եկող տարի ևս, 3) որ սակայն անյետաձգելի պահանջ է հայ ուսուցիչների համար մանկավարժական դասընթացները,—հ. ուս. ընդ. ժողովը սկզբունքով ընդունելի է համարում օտար ուժերի մասնակցութիւնը մանկավարժական դասընթացների կազմակերպման մէջ և յանձնարարում է կենտրոնական վարչութեանը, եթէ հնար է, հէնց այս ամառ կազմակերպել այդ սկզբունքները, հակառակ դէպքում այն սկզբունքով գործել եկող տարի, եթէ հայ մասնագէտների ուժով անկարելի լինի կազմակերպել դասախօսութիւնները»:

Արդէն ուշ լինելով՝ ժողովը յետաձգում է միւս հարցերի քննութիւնը յաջորդ օրվայ:

Աշխատակից

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Շուշի, 27 մայիսի

Գրել էի, որ Մամիա գիւղի մօտ սպանվեցին երկու լեզգի, Ոև գիւղի հանդերում անհետ կորաւ մի Թուրք և Թթու Ջրի ճանապարհին կողոպտվեց պետական պօստը: Ապացուցվեց, որ այս բոլոր չարագործութիւնների հեղինակը հայեր են եղել:

Լեզգիների սպանութեան պատճառով Մամիա և Ղաւախուն գիւղերը ենթարկված են ծուխը հնգական րուբլի տուգանքի: Ոև, Ուլուբաբ և Սարդարաշէն գիւղերից անհետ կորած Թուրքի պատճառով, որ յետոյ դիակը գտնվեց, ձերբակալված են 15 հոգի: Բուն յանցաւորները 3 հոգի են, իսկ մնացածները պատսպարողներ: Պետական պօստը կողոպտելու համար Քարինտակ, Աւետարանոց և Ղարադշլաղ գիւղերը ենթարկված են ծուխը 5-ական րուբլի տուգանքի:

Հինգ րուբլի տուգանքը շատ չնչին բան է համարվում շատերի աչքում, բայց դուք գնալով գիւղերը կը տեսնէք՝ թէ որքան ծանր է այդ աղքատութեան մէջ տառապող ժողովրդի համար: Տեղերը 5 կոպէկ անգամ չունեն: Հարկադրաժամութիւնն էլ (թօվջի) գիւղերում սարսափելի զաւն վիճակում է: Հինգ րուբլի տուգանք և այլ հարկերը վճարում են որքան հարուստը, ունեւորը, տանը 3—4 աշխատող ձեռք ունեցողը, նոյնքան և աղքատը, ոչինչ չունեցողը: Այդ է պատճառը, որ որևէ հարկ ժողովելու ժամանակ շինամէջում թափված կը տեսնէք կարպետներ, գորգեր, կաթսաներ և այլ տնային իրեր: Դրանք չքաւոր դասակարգինն են:

Հայերի այս բարոյական զրկանքները հրապարակի վրա դնելով՝ ես և ինձ հետ հազարաւոր ժողովուրդ յոյս ունենք, որ այսուհետև հայերը (ոչ ամենքը, այլ մի խումբ) տեղիք չեն տայ նորանոր դժբաղդութիւնների: Մարդասպանութիւնները, կողոպուտը, թալանը հայի գործ չէ. վաղուց ի վեր հայը եղել է երկրագործ և վաճառական, ապրել է արդար վաստակով. նոյնը պիտի լինի և այժմ: Թողէք մեզ առարկեն, ապա ինչու թուրքերը մերոնց սպանում են, թալանում են և կողոպտում:

Բայց մի՞թէ այդ առիթ պիտի տայ մեզ նոյն տեսակ վարվել նրանց հետ, նամանաւանդ որ Թուրքերի մեծամասնութիւնն էլ հակառակ է իւրայինների նոյնատեսակ չարագործութիւններին. նրանց մէջ հազիւ 5°/o-ը չարագործ հանդիսանայ, մնացածները իրանց աշխատանքով ապրող մարդիկ են և երբեք չեն ցանկանում, որ ընդհանուր խաղաղութիւնը և ազգասիրութիւնը վտանգվի: Օրինակ Բարդայի, Թառթառի, Աղդամի, Խոնաշէնի, Կարաբուլաղի տոնավաճառների հայերի վիճակը. այդ տեղերում պատուով և հանգիստ են պահում Թուրքերն իրանց և միաժամանակ զսպում իրանց տականքներին: Վերջապէս պէտք է վերջ դնել ամեն տեսակ չարագործութեան և արդար աշխատանքով ապրուստ հայթայթել:

Քիրս լերան վրա գիլիղարդեցի փախստական աւազակապետ Կամրանին ձերբակալելու միջոցին սկսւում է հրացանաձգութիւն, որի ժամանակ սպանվում է մի ստրաժնիկ, մէկն էլ վիրաւորվում է: Կամրանը կարողանում է փախչել:

Քարագլուխ գիւղում կէր այրելու ժամանակ, հօրի առաջ, սպանվել է մի երիտասարդ: Չարագործներն անյայտ են:

Կայծակը Ղշլաղ գիւղում սպանեց մի մարդու, երկուսին էլ ուշաթափ արեց, որոնք յետոյ ուշքի եկան:

**

—

Ախալցխա, 2 յունիսի

Կիրակի, յունիսի 1-ին, ս. Փրկիչ եկեղեցում տեղի ունեցաւ քաղաքիս բոլոր ծխականների ընդհանուր ժողովը՝ կաթողիկոսական ընտրութեանը մասնակցելու համար Ախալցխայի 4 եկեղեցիների կողմից ութը ներկայացուցիչներ ընտրելու, որոնք վիճակիս շրջակայ գիւղերի և աւանների բոլոր ներկայացուցիչների հետ ի մի հաւաքվելով ընտրելու են երկու պատուիրակ Ախալցխայի վիճակի կողմից Թիֆլիսի թեմի պատգամաւորի ընտրութեանը մասնակցելու համար: Հաւաքվել էին 350-ից աւելի ծխականներ, և որովհետև սրանով երկրորդ ժողովն էր, ուստի կանոնաւոր համարելով հայր Ղաղեգեանը՝ բաց արեց ժողովը և առաջարկեց ընտրել ժողովի նախագահ և քարտուղար: Նախագահ ընտրվեց Խ. Թէխմիզեան, իսկ քարտուղար Ս. Ծղամեան, որը ժողովի կէսին հեռանալով՝ նրան փոխարինեց Մ. Բագրատունեանը: Բացարձակ ձայնատուութեամբ առաջարկվեցին մօտ 35 թեկնածուների անուններ, որոնցից գաղտնի թերթիկներով ընտրվեցին պատուիրակ ընտրող ներկայացուցիչներ հետևեալ ութը անձինք. պ. պ. Գրիգոր Ջաթլաշեան, Գէորգ Արարեան, Խաչատուր Թէխմիզճեան, Աբրահամ Անիսոնեան, բժ. Յ. Այվազեան, Մկրտիչ Գրիգորեան, Տիգրան Ղանալանեան և Սեդրակ Աղամեան: Ժողովը սկսվեց առաւօտեան ժամը 10-ից և տեւեց մինչև ցերեկվայ ժամը 3-ը, որից յետոյ փակվեց:

Ծխական

—

Գանձակ, 3 յունիսի

Վրաստանի էկզարխ Նիկօն արքեպիսկոպոսի աճիւնին դիմաւորելու համար, երէկ, յունիսի 2 ին, գիշերվայ ժամը մօտ 11-ին, կայարան էին հաւաքվել Գանձակի պաշտօնատար անձինք՝ սկսած նահանգապետից, գեներալ-նահանգապետից և մեծ թւով երկսեռ հասարակութիւնից, գլխաւորապէս ռուսներ: Կային և հայեր: Եկել էին դիմաւորելու հայ հոգևորականութիւնից հոգևոր կառավ. նախագահ Գ. աւ. ք. Թումանեան և Մ. ք. Տէր-Յովսէփեան, այլ և Թուրքերի ազգին մի մօլլայով: Ժամը 11 ին գնացքը կանգ առաւ Գանձակի կայարանում. ուղղափառ հոգևորականութիւնը հոգեհանգիստ կատարեց, իսկ հայ հոգևորականութիւնը կարճ աղօթք արեց՝ արտայայտելով իր ցաւակցութիւնը թէ նահանգապետին և թէ աճիւնին ուղեկցող հոգևոր պաշտօնեային. այնուհետև վերջինս շնորհակալութիւն յայտնեց դիմաւորող անձանց, որոնց թւում և հայ հոգևորականութեան՝ իրանց կրած նեղութիւնների և արտայայտած ցաւակցական զգացմունքների համար: Ապա գնացքը ճանապարհվեց՝ տանելով իր հետ արքեպիսկոպոսի աճիւնը:

X

—

Երևան, 27 մայիսի

Երևանի թեմի փոխ Թեմակալ՝ Յուսիկ արքեպիսկոպոսի հրաւէրով և կարգադրութեամբ մայիսի 22 ից սկսեցին Երևան ժողովվել Երևանի թեմական դպրոցի համար 6 նոր հոգաբարձուներ ընտրելու թեմի զանազան վիճակներից, օր. Ալէքսանդրապօլից, Կարսից, Հին-Նախիջևանից, Նոր-Բայազէտի և միւս քաղաքների և գործակալութիւնների պատուիրակները: Ինչ ասել կուզէ, որ այդ պատուիրակների մեծ մասը անգիտակ էին թեմական դպրոցի հոգաբարձութեան գործունէութեան, շնորհիւ այն անփութութեան, որ ցոյց էր տուել հոգաբարձութիւնը՝ չը տպագրելով դպրոցի ելք ու մուտքի (տնտեսական) և ուսումնական հաշիւը: Ագիտացիա միայն դաշնակցականներն էին անում, որոնք մի քանի գաղտնի խորհրդակցութիւններ էին ունեցել իրանց թեկնածուներին անցկացնելու համար: Նրանց վերջին խորհրդակցութիւնը եղել էր Գայիանեան դպրոցում, որտեղ նրանք ժողովել էին միամիտ գիւղական և վիճակային պատուիրակներին ու տուել նրանց ձեռքը իրանց թեկնածուների պատրաստի ցանկը: Ամսիս 24-ին, շաբաթ երեկոյեան, տեղի ունեցաւ թեմական դպրոցի դահլիճում Երևանի առաջնորդի նախագահութեամբ բոլոր պատուիրակների առաջին խորհրդակցական ժողովը: Յիշեցի յանկարծ մի մաղալու բան: Մի գաւառական ինտելիգենտ ուսուցիչ, որը լսել էր, որ Գայիանեան դպրոցում, շաբաթ օրը ճաշից յետոյ, ժամը 4-ին ժողով կար, անցնելով դպրոցի մօտից, մտել էր դպրոց: Դոն-Կիշոտի մէկը ժողովի սենեակից՝ դասարանից՝ դուրս է թռչում և մօտենում գաւառական ուսուցչին այսպիսի մաղալու հարցով. «Պարոն, դուք հրաւիրված էք». «Ոչ, թէև պաշտօնապէս չեմ հրաւիրված, բայց մասնաւոր կերպով հրաւիրված եմ»,—ասում է ուսուցիչը: Դոն-Կիշոտը շարունակում է. «Գիտէք, եթէ գաք ժողովի, դուք մեզ կը խանգարէք»: Ուսուցիչը պատասխանել է. «Ապահով եղէք, ես ո՛չ ժողովի կը գամ և ո՛չ կը խանգարեմ»: Եւ այդ կատարվել է այն անձի Թելադրութեամբ, որ ճանաչել է ո՛չ դաշնակցական ուսուցչին: Այդ ուսուցիչը պատմելով ինձ այդ դէպքը, լիաբերան ծիծաղում էր դաշնակցականների ողորմելի և օտարոտի վարմունքի վրա: Թողնենք մաղալու դէպքերը, որոնք մեզ շատ հեռու կը տանեն: Կիրակի, 25-ին մայիսի, առաւօտեան ժամը 10-ին թեմական դպրոցի դահլիճում նշանակված էր բուն ընտրական ժողովը: Ժողովը բացեց սրբազան փոխ-Թեմակալ Յուսիկը մի քանի խօսքով, ստուգեց բոլոր պատուիրակներին, որոնց թիւը 38 էր Երևանի պատուիրակների հետ միասին, ապա սրբազանը առաջարկեց ժողովին նախագահ ընտրել, իսկ ինքը հեռացաւ: Նախագահ ընտրվեց փաստաբան Գրիգոր Տէր Խաչատրեանը: Դեռ նախընթաց երեկոյեան ես փախայ դահլիճից ճառերից ձանձրացած: Այդ ընտրական ժողովումն էլ բաւական անհետաքրքրական ճառեր խօսվեցին, նոյնիսկ ձանձրալի. վերջում հոգաբարձութիւնը ներկայացրեց ելմտի, իսկ տեսուչ պ. Տ. Աղամալեանը ուսումնական հաշիւը, որոնց մասին կը գրեմ յաջորդ անգամ:

Պիրօ

—

Նոր-Բայազէտ, 28 մայիսի

Անցեալ ապրիլին քաղաքային վարչութեան սրահում կայացաւ մէջչանական հասարակութեան տարեկան ընդհանուր ժողովը, քաղաքային աւագ պ. Ստ. Բաաիկեանցի նախագահութեամբ: Ժողովւում պէտք է կազմվէր նախահաշիւը՝ տարեկան ելք ու մուտքի վերաբերմամբ և վճռվէր հասար. զանազան խնդիրներ, որոնք վերաբերում էին հողաբաժնութեան, արքունական և հասարակական ծախսերի բաժանման, խոտատեղերը և ցանքերը պահպանելու համար ղօրուղչիներ վարձելուն և այլն:

Ժողովը բաղկացած լինելով զանազան դասակարգի մարդկանցից, ամեն մի հարց քննելիս ձայները խառնվում էին իրար, տեղի ունէր բղաւոց-ճղաւոց, և ոչ ոք ոչինչ չէր հասկանում: Ուստի ականջ խլացնող աղմուկների տակ և ժողովականների մի մասին անհասկանալի մնալով, հարցերը իբր թէ վճռվեցին ըստ էութեան, ինչպէս եղել է սովորաբար: Բայց Աստուած ազատի մեզ այդպիսի ժողովներից, ուր, ինչպէս ասում են, շունը տէրը չէ ճանաչում և ուր կըրքերը բորբոքվում են և համեստութեան չափ ու սահմանը անցնում...

Հարցերի թւում դրված էր նաև նախկին աւագ պ. Գ. Արծրունու մի քանի տարվայ հաշիւների վերաստուգող յանձնաժողովի կամ հաշւետեսների զեկուցումը: Յանձնաժողովը հաշիւներում գտել էր մի քանի թերութիւններ, այն, որ աւագ Արծրունին առանց հաս. համախօսականի աւելորդ ծախսեր էր կատարել ինքնագլուխ (օրինակ ժանտախտի և այլն), որոնց յանձնաժողովը չէ ընդունում: Սակայն գործը հաշւետեսների կողմից ուղարկված լինելով Երևանի նահանգապետին, վերջինս նորից վերադարձրել էր մէջչանների ժողովի հայեցողութեան տակ դնելու: Իսկ Արծրունին տալով իր բացատրութիւնը ամեն մի առարկայի դէմ՝ արդարացուցիչ փաստեր էր առաջարկել, յայտնելով, որ, օրինակ, ժանտախտի մասին, երբ քաղաքացիք պարտաւորվել էին «օլամով» մշակներ տալ, որոնք ժամանակին չէին գալիս աշխատելու, իսկ անասնաբոյժը իր սարածնիկներով ամեն րօպէ պահանջում էր գործը առաջ տանելու,—ահա այդ դէպքում Արծրունին ստիպված էր մէջչանների գումարից ծախսել աշխատանքը ի կատար ածելու՝ բբրև անհրաժեշտ և անյետաձգելի գործ: Եւ այսպէս միւս առարկաների վերաբերմամբ տրված էր Արծրունու այլ բացատրութիւնները: Այնուամենայնիւ ձանձրացած այդ հաշւետեսութեան խնդրից, ժողովականներից ոմանք կամենում էին մի կերպ փակել Արծրունու հաշիւները, իսկ հակառակ բանակի մարդիկ պահանջում էին ոչ մի կերպ չընդունել իբր հասարակական ծախսեր և ստիպել Արծրունուն ինքնագլուխ ծախսած գումարը յետ վերադարձնել հաս. կասսային իր սեփական միջոցներից: Սակայն շատ աղմուկների և ղալմաղալների պատճառով ժողովի նախագահ Ստ. Բաաիկեան ստիպված եղաւ այդ հարցը հերթից հանել: Բայց և այնպէս Արծրունու հաշիւների գործը նորից յանձնված է մի այլ խումբ հաշւետեսների, որոնց, նահանգապետի առաջադրութեան համաձայն, ընտրեց այդ ընդհանուր ժողովը։ Թէ ինչ կերպ կը վերջանայ հաշւետւութեան այդ խնդիրը, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։ Նոր հաշւետեսները ընտրվել են՝ 1) պ. պ. Ա. Առաքելեան, 2) Ս. Տէր-Գրիգորեան, 3) Գ. Տէր-Իսահակեան, 4) Գ. Դաբաղեան և 5) Բ. Հասրաթեան, որոնք ահա մի ամսից աւելի է, ինչ քննում են հաշւեմատեանները մանրակրկիտ ուսումնասիրութեամբ։

Բայց, այնուամենայնիւ, դատելով այս և այն տեսակէտից, կարելի է գալ այն եզրակացութեան, որ պ. Գ. Արծրունին (նախկին աւագը), իբր «բարի մարդ», շատ շռայլաբար է վերաբերվել դէպի հասարակութեան գումարները և հաշիւները տնային կերպով պահելով՝ ընկել է թիւրիմացութիւնների մէջ։ Սակայն վերցնել և ասել թէ աւագ Արծրունին գեղծումներ է կատարել կամ վատնումներ արել,—մեղանչած կը լինենք արդարութեան դէմ։ Իսկ որ հաշիւները խառն ի խուռն են տարվել, դա փաստ է, ուստի հարկաւոր էր գործի և հաս. սկզբունքի տեսակէտից գոնէ մաքուր և պարզ պահել հաշիւները և ասէ-կօսէների տեղիք չը տալ։

Որսորդ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐՈՎԲԵԱՆ

Ընդունակ, ուսումնասէր, կարող գրչի և սուր քննադատական հոգու տէր, համարձակ ու շիտակ անձն, կենդանի և հիւթառատ քարոզիչ, ուժեղ կամքով օժտված և, որ ամենից գլխաւորն է, ժողովրդավարական սկզբունքներով տոգորված մի անխառն մաքուր հայ մարդ է Մուշեղ եպիսկոպոսը։

Երիտասարդ արմաշականը կուսակրօն վարդապետ ձեռնադրվելուց յետոյ մի տարի ուսուցիչ եղաւ Արմաշում, ապա կարգվեց քարոզիչ Կ. Պոլսի Մաքրի-գիւղի ս. Աստուածածին եկեղեցում։ Յետոյ կարգվեց առաջնորդական տեղապահ Արաբկիր։ Ժողովուրդը սիրեց նրան, ուստի և մի տարուց յետոյ ընտրեց իրանց թեմի առաջնորդ. վարեց այդ պաշտօնը մօտ վեց տարի։ Երիտասարդ առաջնորդի արթուն պաշտօնավարութիւնը թիւրք կառավարութեան աչքը ծակեց. հարկադրված եղաւ հրաժեշտ տալ պաշտօնից, քան թէ համակերպվել տիրող վատթար պահանջներին։ Գալով Կ. Պոլիս, կարգվեց պատւական քարոզիչ Պերայի ս. Յարութիւն եկեղեցում, ապա ընտրվեց առաջնորդ Ադանայի թեմի և ժողովրդի միջնորդութեամբ ձեռնադրվեց եպիսկոպոս Սսի կաթողիկոսից։ Պէտք է ասեմ, որ սա 1903 թ. առաջարկված էր՝ ի շարս այլոց՝ ամենայն հայոց հայրապետին Օրմանեանի կողմից եպիսկոպոսութեան, բայց թիւրք կառավարութիւնը չը տուեց իրաւք Ռուսաստան գալու։

Սա ունի բազմաթիւ գրական աշխատութիւններ, յայտնի է կրօնի վերաբերութեամբ ունեցած իր առողջ հայեացքներով ու կենդանի լուսաբանութիւններով, ջերմ կուսակից է նեխած, փտած մասերը մաքրելու, քաջարձակ ճակատող է կղերական հոգու դէմ, հակառակ է կուսակրօնական իշխանապետութեան։ Լինելով Օրմանեան եպիսկոպոսի առաջադէմ աշակերտը, անհաշտ հակառակորդն է նրա ուղղութեան, կարելի է ասել միակ անկախ հոգին է, որ բարձրացնում է իր բողոքի ձայնը Օրմանեանի դէմ, թէ մամուլի մէջ, որքան որ այդ հնար է թիւրքական կարգերում, և թէ մանաւանդ քաջարձակ ստորագրութեամբ գրած նամակներով առ պատրիարք Օրմանեան։

Նա, իբրև հայ ժողովրդավար եկեղեցու հարազատ զաւակ, բնական է որ հակառակ պիտի լինի Օրմանեանի կաթողիկութեան. Քերեմ նմուշի համար նրա հայեացքները այդ մասին, մանաւանդ որ այդ հայեացքների մէջ շատ պարզ կերպով արտափայլում են նրա գաղափարները մեզ հետաքրքրող խնդրի մասին.

«Օրմանեանը կաթողիկոսացնել՝ կը նշանակէ դէպի կրօնական միապետութիւն, դէպի ակներև կղերամոլութիւն վազել, յետադիմել պարզապէս և թողուլ որ՝ մեր հայկական եկեղեցիի ժողովրդական-հասարակական վարչութեան բանաւոր սկզբունքը խեղդուի լատինական անձնամոլութեան ճիզուիտ մաքիավելութեան գիրկը։ Մեր դարը ժողովրդական յառաջդիմութեան դարն է, և մեր եկեղեցին միակն է, որ ամեն յարմարութիւն եւ ընդունակութիւն ունի յառաջադիմելու եւ պատշաճելու այն պէտքերուն, որոնք օրէ օր իրենց գոյութիւնը կը ցցնեն։ Անխախտ պահենք հիմը, բայց այդ հիմը անաղարտ պահպանելու միջոցը ոչ թէ կղերամոլութեան և ապուշ նախապաշարումներու գոյութեան, այլ «լո՜յս լո՜յս» սկզբունքին կիրարկութեան մէջն է»։

Այս տողերով փակում եմ ասելիքներս երիտասարդ Մուշեղ եպիսկոպոսի մասին, որ իր արտայայտած գաղափարներով այնքան մեր առաջադրած ցանկութիւնների արտայայտիչն է հանդիսանում, հետևապէս արժանի է քառանուն ցանկի մէջ երրորդ տեղը բռնելու Իզմիրլեանից և Դուրեանից յետոյ։

Մ. ա.-ք. Մելեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԵՒ ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ *)

Սպենդիարեան.—Թեկնածուների մասին ներկայումս խօսելը վաղաժամ է. պէտք է սպասենք Թիւրքիայի հայ պատգամաւորներին, լսենք նրանց թեր և դէմ կարծիքները և ըստ այնմ էլ որոշենք հայրապետական ընտրելին։ Եթէ Մկրտիչ կաթողիկոսի ընտրութեան ժամանակ մենք լսած լինէինք նրանց լաւատեղեակ ու խելացի մարդկանց կարծիքները, մեր վերջին 15 տարվայ կաթողիկոսութիւնը այսպէս չէր լինի։ Ես կառաջարկէի ընդհատել այդ թեկնածուների մասին խօսելը և սպասել գալիք պատգամաւորներին։ Միանգամայն համաձայն եմ իմ ընկեր Արծրունու ասածներին, որ ցենզ պիտի ունենայ կաթողիկոսը։ Մեր հոգևորականներից ամենայայտնիները նրանք են, որոնք լեզուներ լաւ գիտէին, ինչպէս Ներսէս, Այվազովսկի և այլն։ Ժամանակ է, որ կաթողիկոսը լինի ուսեալ, լեզուագէտ մարդ։ Ինչպէս ուսուցչից ցենզ ենք պահանջում, նոյնը պիտի պահանջել և կաթողիկոսից։

Ս. Արծրունի.—Երկու քաղաքականութիւն չը պիտի շփոթենք իրար հետ—Ռուսաստանի և Թիւրքիայի, որոնք հակառակ են իրար։ Ռուսաստանի եպիսկոպոսը անհամապատասխան կը լինէր այնտեղի համար, որովհետև նրանից թիւրքական քաղաքականութեան ոգին է պահանջվում։ Եւ ընդհակառակը։ Եթէ ես դրի լեզուագիտութեան հարցը, որովհետև քաղաքականութեան ոգին ուսումնասիրելու ու ըմբռնելու համար պէտք է լեզու իմանալ։ Պահանջենք ուրեմն մտաւոր, բարոյական և ցենզական արժանաւորութիւններ նրանցից։ Պէտք է ունենալ տեղեկութիւններ, թէ իրանց անցեալով, ներկայով, բնաւորութեամբ, տաղանդով ու համոզումներով կարող են համապատասխանել մեր պայմաններին։ Տուէք մի մարդ, որ տար գրաւական՝ թէ այս XX դարում կարող է բարձր պահել հայրապետութեան դիրքը։

Բժ. Ստեփանեան.—Ուրեմն դուք ուզում էք Ռուսաստանից լինի։

Ս. Արծրունի.—Եթէ կան՝ մատնացոյց արէք։ Ժամանակ է վերջապէս թողնել այն նախապաշարմունքները, որոնցով ղեկավարվել ենք ամեն անգամ կաթողիկոս ընտրելիս։

Ս. Լիսիցեան.—Թողնենք վերացական դատողութիւնները և դիմենք գործնականին։ Պէտք է թեկնածուների ցանկը կազմել։ Ցաւում եմ, որ մասնաժողովը բացի երկուսից, միւսների մասին տեղեկութիւններ չը կարողացաւ ներկայացնել։ Այդպիսով մենք վճիռ կայացնելու հնարաւորութիւն չունենք։ Այսուհետև գոնէ մի քայլ անենք, մարդիկ ուղարկենք, կապեր հաստատենք և հարկաւոր տեղեկութիւնները հաւաքենք։ Ես, օրինակ, կառաջարկէի Բագրատ վարդապետի թեկնածութիւնը ևս մտցնել ցուցակում։

Նախագահ.—Նրա թեկնածութիւնը արդէն դրել ենք ցուցակում։

Ս. Լիսիցեանը շարունակում է տեղեկութիւններ տալ նրա տոկուն գործունէութեան մասին դպրոցական ու վարչական ասպարէզում։ Մատնանշում է նրա հաշւետւութեան մաքրութիւնը և ժողովրդական ձգտումները իբրև մեծ արժանաւորութիւն։ Դնում է նրա թեկնածութիւնը իբրև ցանկութիւն։

Շահնազարեան (Շուշու ներկայաց.) առաջարկում է ընտրել խառն յանձնաժողով, որը ուսումնասիրելով թեկնածուների կենսագրութիւնը՝ զեկուցում ներկայացնի սեպտեմբերին պատուիրակների ու լիազօրների ժողովին։

Մելեան ք. նկատում է, որ իսկապէս դժուար կարող ենք մարդկանց ճանաչել, քանի որ հնարաւորութիւն չենք ունեցել հետաքրքրվելու նրանց երկերով։ Նրա կարծիքով, մեզ պիտի հետաքրքրեն հիմնական սկզբունքները։ Առաջարկում է թողնել ներկայ յանձնաժողովը, որպէսզի մշակի ներքին կանոնադրութիւն ու ծրագիր՝ ժողովրդականացնելով նրան և մինչև սեպտեմբեր հաւաքի հարկաւոր տեղեկութիւնները թեկնածուների մասին։

Բժ. Ստեփանեան.—Ես լսեցի չորս ժողով, և ինձ թւում է, որ մենք արդէն սպառել ենք մեր նիւթը։ Հայր Մելեանի առաջարկը ես գտնում եմ գործնական ու ցանկալի։ Մեր ժողովները մինչև այժմ եղել են նախապատրաստական. այսօրվանը համարենք վերջնական։ Մենք բարոյական անգամ իրաւունք չունենք վերջնական որոշումներ կայացնելու. վերաբերվենք զգոյշ ու լուրջ։ Լաւ է յանձնել մասնաժողովին տեղեկութիւններ հաւաքել ու զեկուցումներ պատրաստել։ Կան մարդիկ, որոնք կարող են աջակցել մասնաժողովին։ Այստեղ կարևոր մերկացումներ արվեցին, որոնք որոշ տպաւորութիւն գործեցին, ինչպէս օր. 40,000 համալների արտաքսելը Պօլսից. ցանկալի էր, որ յանձնաժողովը ստուգէր այդ փաստերը։

Չերքեզեան.—Նախ քան մի վարդապետի անուն ցանկի մէջ մտցնելը՝ լաւ կը լինէր ստուգել, թէ կարելի է թէ ոչ. իմ կարծիքով պօլօժենիան չէ ընդունում։

Նախագահը բացատրում է, որ քառանուն ցանկը կազմվում է եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից՝ սանօմնիկներից։ Թեմական առաջնորդները պատկանում են այդպիսիների թւին։

Չերքեզեան.—Թեմական առաջնորդութիւնը սան չէ, այլ պաշտօն։ Սանօմնիկ պօլօժենիան համարում է եպիսկոպոս, արքեպիսկոպոս։ Այստեղ ասվեց թեկնածուների վերաբերմամբ տեղեկութիւններ հաւաքելու մասին։ Դա անկարելի է ոչ նամակով և ոչ էլ մարդ ուղարկելով։ Ամենաուղիղ ճանապարհն է սպասել Թիւրքիայի պատգամաւորներին։ Ցանկալի է, որ Թիֆլիսի թեմը չը շտապի արտայայտել իր տրամադրութիւնը, որը կարող է ազդել միւսների վրա և պատճառ լինել անաջող ընտրութեան։ Պէտք է զգոյշ վարվել։

Բժ. Առեմեան մատնանշում է, որ կաթողիկոսը բաւական չէ որ լեզուագէտ լինի, այլ պէտք է և խօսելու ձևը իմանայ, խելացի մարդ լինի, որովհետև լեզու իմանալը շատ անգամ դժբաղդութիւն է։ Նա այն միտքն է յայտնում, որ յոյսը անհատի վրա չը պէտք է դնել. պէտք է ունենալ լաւ մշակված օրէնք, որով ղեկավարվեն այդ անհատները։

Գարեգին վարդ. խնդրում է նախագահին նախ փարատել իր տարակուսանքը Իզմիրլեանի նամակի առիթով, որովհետև ասում են, որ ինքը չէ գրել։

Նախագահ.—Որքան ես գիտեմ, այդ նամակը նրա կողմից գրել է Ներսէս Ղարախանեան վարդապետը, որը մեզ համար վստահելի անձ է։

Գարեգին վարդ.—Ցաւում եմ. պէտք էր ճիշտ տեղեկութիւններ տալ, որովհետև տպաւորութիւնը լինում է ի վնաս գործի։

Ապա նա պատմում է իր անձնական տպաւորութիւններն ու տեղեկութիւնները Եղիշէ եպ. Դուրեանի մասին, որ համապատասխանում է Մելեան քահ. ասածներին, և յիշում է մի ուրիշ եպիսկոպոսի անունը՝ Տրդատ եպ. Պալեան (Կեսարիոյ առաջնորդ), որը յայտնի է «Հայոց վանքերի պատմութիւնը» աշխատասիրութեամբ և իր թեմի համակրութիւնն է վայելում։

Հ. Տէր-Աստուածատրեանը համաձայն է տեղեկութիւնները յետաձգելուն, բայց նոր մասնաժողով ընտրելը այս ժողովը համարում է անձեռնհաս։ Միանում է արված առաջարկին՝ տեղեկութիւններ հաւաքելու մասին և աւելացնում է, որ զեկուցումներ պատրաստելը յանձնվի հասարակական երկու տարբեր հոսանքներից իւրաքանչիւրին կազմելու զեկուցում իր թեկնածուների մասին։

Լիսիցեան.—Համաձայն չեմ Չերքեզեանի հետ, որ տեղեկութիւններ տալը թողնենք Թիւրքիայի պատգամաւորներին։ Ճիշտ ասացին, որ այստեղ կան երկու—տարբեր հոսանքներ, աշխարհահայեացքներ—Իզմիրլեանական և Օրմանեանական,—նոյնիսկ դրա համար թերթեր են հրատարակվում։ Ամեն մի կողմի առաջին թեկնածուն արդէն յայտնի է։ Պէտք է որոշել երկրորդականները։ Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում պօլօժենիայի վրա. վերջին տարիներս սիստեմատիքաբար թոյլ չեն տալիս երիտասարդ վարդապետներին ասպարէզ մտնել։

Չերքեզեանը յիշեցնում է մի ուրիշ մոռացված եպիսկոպոսի անուն՝ Նիկոմիդիայի առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսին, որին դեռ առաջներում ապագայ կաթողիկոս էին համարում։ Նա այժմ 68 տարեկան է։

Նախագահը յայտնում է, որ վիճաբանութիւնները պարզեցին մի անվիճելի կարևոր կէտ, այն, որ կայ երկու որոշ հոսանք. մինը կողմնակից է Իզմիրլեանի, միւսը՝ Օրմանեանի թեկնածութեան։ Սակայն պարզվեց և այն, որ Իզմիրլեանին առաջարկողները չեն կարող և չը պէտք է նրա կողքին դնեն Օրմանեանին, ինչպէս և Օրմանեանին առաջարկողները չեն կարող և չը պէտք է նրա հետ դնեն Իզմիրլեանին, որովհետև երկու թեկնածուները որոշ, բայց իրար հակառակ ուղղութիւնների արտայայտիչներ են։

Զաւարեանը նորից կարդում է իր սկզբունքային առաջարկները, որոնցից անվիճելիները ընդունվում են, իսկ երկուսը համարվում են վիճելի և յետաձգվում են։

Որոշվում է վերջնական ժողովը նշանակել առաջիկայ հինգշաբթի օր, որպէսզի խորհրդակցութիւնները որոշ եզրակացութեան յանգեն թեկնածուների մասին։

Ժողովը փակվում է ժամը 12-ին։

Լ. Գ.

ՃԵՄԱՐԱՆԸ

Էջմիածին, 22 մայիսի

Վերջացնելով ճեմարանի 1907/8 ուսումնական տարեշրջանը, պարտք եմ համարում մի ընդհանուր հայեացք ձգել անցեալի վրա։

Արդէն ամեն մի հասարակական հարցերով հետաքրքրվողին շատ պարզ պիտի լինի ճեմարանի ներկայ նիւթական սղութիւնը։ Դրա պատճառը, ի հարկէ, վանքի ելևմտի խանգարումիցն է։

Տարվայ կէսից սկսած ճեմարանի փակվելը դամոկլեան սրի պէս կախված էր մեր գլխի վրա, բայց շնորհիւ տեսուչ պ. Մինաս Բերբերեանի և տնտես պ. Մեսրոպ Աբովեանի այս տարի էլ քաշ տուեցինք։

Ներկայ տնտեսը իր աչալուրջ գործունէութեամբ իսկական ընտանիքի բնաւորութիւն է տուել հաստատութեանը։ Պահում է առանձին կով, հաւանոց և բանջարանոց, որոնք նիւթերի թանգութեան կամ պակասութեան րօպէներին շատ տեղին օգնութեան են հասնում։

Ճեմարանի խրոնիկական թերութիւններից մէկն էլ այն է, որ միշտ ունեցել է ընդհանուր ֆիզիկապէս հիւանդ աշակերտութիւն։ Հիւանդութիւնները գլխաւորապէս լինում են անէմիա, մալարիա և սրտի բաբախում. դրա պատճառները մի քանիսն են. նախ՝ եղել են ղեկավարներ, որոնք ոչ մի ուշադրութիւն չեն դարձրել բժշկական քննութեան վրա, եթէ աշակերտը «զակազ» է եղել կաթողիկոսից կամ այս-ինչ «մօտ» ծանօթից։ Երկրորդ՝ տարվայ վերջը՝ եղած հիւանդների վրա առանձին հոգ չէ տարվել։ Երրորդ՝ շինութիւնը նեղ է։ Չորրորդ՝ բացակայում են մարմնամարզական գործիքներ և այլն։

Այս տարի պէտք է խոստովանել, որ համեմատաբար լաւ է եղել։ Հիւանդանոցին տրված է լայն ինքնավարութիւն բժշկի հսկողութեան տակ, սննդի ու կարգի առանձնացումով, մասնաւոր հիւանդների վրա առանձնապէս ուշք դարձնելով։ Բայց եղանակի փոփոխութեան շնորհիւ աւելի շատ հիւանդներ ունեցանք, քան առաջ։ Պատահեց երկու շատ ցաւալի մահ։ Տարվայ վերջում, ուսման տեսակէտով առաջադէմ, բայց ֆիզիկապէս թոյլ աշակերտներին ազատեցին քննութիւններից և ուղարկեցին հայրենիք կազդուրվելու։

Ուսումն. բաժինը, համեմատած վերջին տարիների հետ, լաւ անցաւ. նախ՝ վերջին չորս տարվայ նման զատկվայ տօներից արձակուրդ չը սկսվեց. բ) եղաւ ծրագրի մէջ որակի և քանակի փոփոխութիւն, յատկապէս լսարաններում. առաջվայ մասամբ սխօլաստիկ առարկաների տեղ, այժմ աւանդվում են այժմէութիւն ունեցող և լուրջ առարկաներ (օրինակ տնտեսագիտ., իրաւագ., փիլ. պատ., կրօն. պատ., յունար. գրակ.). գ. տարին անցել է մի շարք ուսուցչական և աշակերտական դասախօսութիւններով, որոնք փարատել են գիշերօթիկութեան յատուկ թմրութիւնը։

Տարվայ վերջին քննութիւնները եկան ապացուցանելու թէ որքան անխնամ և անհոգ դրութեան մէջ է եղել ճեմարանը անցեալ և նախկին տարիներում։ Նկատվում է չափազանց թուլութիւն բոլոր առարկաներից, մանաւանդ լեզուներից, որի պատճառը առարկաների խախուտ հիմնաւորումն է։ Բայց ներկայ պ. տեսուչը ի յայտ անելով այդ, ինչպէս երևում է, կամենում է հիմքը ամրացնել։

Քննութիւնները պատճառ դարձան շատ աշակերտների դուրս արվելուն։ Այստեղ պէտք նկատել, որ գարին և բարին խառնվեցին իրար. կային այնպիսիները, որոնք բաւականին ուժեղ էին, սակայն դուրս էին արված։ Բայց բարեբաղդաբար ներկայ մանկ. ժողովը՝ հակառակ նախկիններին, նկատի առնելով աշակերտների առանձին բացառութիւնները, մի քանիսին կրկին ընդունեց։ Այնուամենայնիւ եղան ի զուր զոհեր, մեր կարծիքով։ Ոչ մի տարի այսքան դուրս արված չէ եղել։

Ինչ վերաբերում է ուսուցիչներին, պէտք է ասել, որ նրանց մասին խօսելիս նկատի պիտի ունենանք հայկական իրականութիւնը, մեր մտաւոր ոյժերի քանակը և որակը. այդ տեսակէտից գոհ պիտի լինենք, մանաւանդ լսարանի դասերից *)։ Դասարանի ուսուցիչների դասերից երբեմն եղել են դժգոհութիւններ։ Ցանկալի էր պ. տեսուչը ուշք դարձնէր դրանց վրա։

Արտաքին բարենորոգութիւններից նկատելի է շորերի ձևի փոփոխութիւնը, որը իսկապէս աշակերտի շնորք է տուել և ազատել նախկին «փարաջայից», և նուագածութեան դասաւանդութիւնը, որ բոլորովին նորութիւն է, թէև անբաւարար է աւանդվել։

Գալ տարի, ինչպէս երևում է, աւելի լաւ թափով պիտի սկսի պ. Բերբերեանը։ Արդէն հիմիկվայ նախագծից երևում է, որ բաւականին ուժեղացնելու է լսարանները, յատուկ ուշադրութիւն դարձնելով բնագիտութեան և մանկ. գործնական դասերի վրա։ Նրա ցանկալի նպատակն է լսարանը դարձնել ուսուցչանոց բառի ընդարձակ և բովանդակալից իմաստով։

Ցանկանանք աջողութիւն, միայն եթէ կրկին շարունակէր անել այդ բոլորը ուսուցիչների մասնակցութեամբ և հասուն աշակերտութեան կարծիքները ուսումնասիրելով։

Արսէն Կիտուրեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքան, Վրաստանի էկզարխ Նիկոն արքեպիսկոպոսի եղերական սպանութեան առիթով, հեռագրել էր Թագաւոր Կայսրին և հաղորդել տեղական ազգաբնակութեան այն բոլոր խաւերի մասին, որոնք, արտայայտելով իրանց ցասումը և խորին ցաւակցութիւնը կատարված սոսկալի ոճիրի վերաբերութեամբ, խնդրել էին իրանց այդ զգացմունքները արտայայտել առ ոտս Նորին Մեծութեան։ Թագաւոր Կայսրը, յունիսի 2-ին, Փոխարքայի անունով բարեհաճել է ուղարկել հետևեալ պատասխանը հեռագրով. «Խորապէս յուզված եմ Վրաստանի էկզարխ Նիկոնի քստմնելի սպանութիւնից։ Հաւատացած եմ, որ Կովկասի բոլոր բարեմիտ բնակիչները վշտացած են նոյնպէս, ինչպէս Ես, այդ չարագործութիւնից։ Շնորհակալ եմ զգացմունք արտայայտողներից։ ՆԻԿՈԼԱՅ»։

◆ Կովկասի Փոխարքան հաստատել է Թիֆլիսի քաղաքային դումայի այն որոշումը, որի համաձայն երկաթուղային վարչութիւնը իր հիւանդանոցի համար քաղաքային հողը գրաւելու փոխարէն քաղաքին վճարելու է 24,000 րուբլի։ Փոխարքան հաստատել է որոշումը այն պայմանով, որ յիշեալ գումարը աւելացվի քաղաքային պահեստի գումարների վրա։

◆ Հանգուցեալ էկզարխ Նիկոն արքեպիսկոպոսը իր մահվան նախորդ օրը մի հեռագիր է ուղարկած եղել սինոդի օբէր-պրոկուրոր Իզվօլսկուն, որով յայտնում է, որ ինքը պատրաստվում է Պետերբուրգ գնալ սինոդում Անտոնիյ միտրոպօլիտի պաշտօնակատարը դառնալու։

◆ Վրաստանի նոր էկզարխ նշանակելը հազիւ տեղի ունենայ աշնանից շուտ, որովհետև ներկայումս Պետերբուրգում սինոդի նիստերին շարունակ անդամները բացակայում են այս կամ այն պատճառով, այն ինչ էկզարխ նշանակելու համար պահանջվում է, որ ներկայ լինեն սինոդի բոլոր անդամները առանց բացառութեան։

◆ Թիֆլիսաբնակ Եւգենիա Սարգսեանը մեզ խնդրում է յայտնել, որ նրա 13-ամեայ Արտաշէս որդին ահա ութ ամիս է, որ անյայտացել է տնից։ Վշտահար մայրը թախանձագին աղերսում է նրա տեղը գիտցողներին յայտնել Դուխօվսկայա փողոց, № 38 տանը։

◆ Յունիսի 3-ին առատ անձրև է տեղացել Ալէքսանդրոպօլում և շրջակայքում. շատ փողոցներ և տների ներքին յարկեր լցվել են ջրով. վնասները խոշոր են։

◆ Թիֆլիսում լուր է ստացվել, որ Նուխու գաւ. Սէյդլու գիւղում գազանաբար սպանել են կալուածատէր Յարութիւն-բէկ Կարախանեանին, նրա կնոջը և լեզգի ծառային։

◆ Թիֆլիսի ոստիկանութիւնը յունիսի 3-ին խուզարկեց մաքսատան կից ապրող մշակ դասակարգի հանրակացարանը։ Գարականդատակ Մովսէս Տէր-Ղազարեանի սնդուկում գտնվեցին՝ մի տոմս Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկ. № 80098—Պօղոս Մուշղուսի Բաղդասարեան Խաչատրեանցի անունով 10,443 րուբլի գումարի, Թիֆլիսի առևտրական բանկի մի տոմս № 50402—Յովակիմ Մանուսի Բաղդասարեան Խաչատրեանցի անունով 10,000 րուբլու, նոյն բանկի տոմս № 50459—Սարգիս Մանուսի Բաղդասարեան Խաչատրեանցի անունով՝ 6897 ր. 45 կոպէկի և 2255 րուբլի գումարի գանձում (вкладъ) Մանուսի Բաղդ. Խաչատրեանցի անունով «Մովսիսեան և ընկ. առևտրական տանը», ընդամենը 29,596 րուբլի 28 կոպ.։ Բացի դրանից Տէր-Ղազարեանցի մօտ գտնվեց մաքսատան կողոպտիչներից մէկի և մաքսատան կառավարչի մարդասպանի լուսանկարը։ Տէր-Ղազարեանցը ձերբակալված է։

◆ Կովկասեան շերամապահական կայարանին կից մօտ օրերս կը բացվեն շերամապահութեան և մեղուաբուծութեան ամառային դասընթացքներ։

◆ Անդրկովկասում բամբակի բերքը շատ անորոշ է։ Բայց և այնպէս այժմեանից կարելի է ասել, որ բերքի հետևանքները անբաւարար են լինելու։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը արդէն մշակել է այն կանոնները, որոնց համաձայն Թիֆլիսում կարող են գոյութիւն ունենալ սինեմատոգրաֆները։ Կանոնները յանձնվելու են դումայի հաստատութեան։

◆ Թիֆլիսի շերամապահական կայարանի գործերը քննելու համար Պետերբուրգից եկող յանձնաժողովի կազմի մէջ, ի թիւս այլոց, գտնվում է նաև Մոսկվայի շերամապահական կոմիտէի նախագահ, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Տիխոմիրովը։

◆ Գիւղատնտես Սատունինը մեկնել է Կարսի շրջանը ձկնաբուծական հետազօտութիւններ կատարելու համար։

◆ Սեպտեմբերին Թիֆլիսում բացվելու է թռչնապահութեան ցուցահանդէս։ Երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը ուղարկել է ոսկէ և արծաթէ մեդալներ։

◆ Երկրագործութեան գլխաւոր վարչութիւնը մտադիր է մօտիկ ապագայում ձեռնարկել վերաքննելու Անդրկովկասի պետական գաղթականների հողային բարեկարգութեան օրէնքները։

◆ Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետը առաջարկել է քաղաքային վարչութեան, որ այն արձանագրութիւնները, որ կազմվում են քաղաքային առևտր.-տնտեսական հսկիչները հացի և մսի գները խախտելու մասին, չուղարկել հաշտարար դատաւորներին, այլ ներկայացնել իրան մեղաւորներից վարչական կարգով տուգանք վերցնելու համար։

◆ Թիֆլիս քաղաքի 5-րդ թաղամասի փակված գինետների, պանդոկների, ճաշա-

---

*) Տես «Մշակ» № 121.

*) Այդ մասին մի յօդուած լոյս տեսաւ «Վտակում», ուր ի միջի այլ անճիշտ տեղեկութիւնների, կային և լսարանի ուսուցիչներ Երուանդ վարդապետի և պ. Սամուէլեանի մասին. դրա հերքումը իսկոյն գրեցի «Վտակին», բայց չը գիտեմ ինչ պատճառով մինչև այժմ չէ տպվել։ Այսպիսի հասարակական հաստատութեան մասին պէտք է երկու կարծիքն էլ իմանալ։ Ա. Կ.

բանների, Թէյատների տէրերը մի հաւաքական խնդրագրով քաղաքագլխի միջոցով խնդրել են գեներալ-նահանգապետին բանալ իրանց խանութները, որոնց հասոյթով նրանք պահում են իրանց գերդաստանները։

◆ Ներքին գործերի մինիստրութեան անտեսական մասի կառավարիչ Գերբէլը հեռագրով դիմել է կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան, խնդրելով հաղորդել իրան՝ ինչ դրութեան մէջ են ցանքերը և ինչպիսի բերք է սպասւում։

◆ Թիֆլիսի 2-րդ հաշտարար բաժնի դատաւոր. քննիչ Եանչեւսկու կարգադրութեամբ, յունիսի 4-ին ձերբակալեցին և բանտ դրին Ազով-Դօնեան բանկի նախկին ծառայող Ալէքսանդր Իվանօվիչ Եւանգուլօվին, որ մեղադրւում է 17,000 րուբլի վատնելու մէջ։

◆ Թիֆլիսի նահանգապետը լրացուցիչ տեղեկութիւններ է պահանջել քաղաքային վարչութիւնից դումայի նորընտիր քարտուղար Ջաբարի մասին։

◆ Մցխէթի պօստային բաժանմունքը յունիսի 1-ից վերածված է պօստ-հեռագրական բաժանմունքի, ուր և ընդունվում են ներքին հեռագրեր։

◆ Ախալցխայից գրում են, որ Արտաւթուանի արքունական անտառում անյայտ պատճառներից հրդեհ է ծագել. դէպքի տեղն են գնացել պաշտօնական անձինք։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարում հ. Մելեանի ճառերի մէջ սպրդել են մի քանի տեղ՝ «արմատական վարդապետներ» փոխանակ արմատականի, և այնտեղ, ուր ասված է՝ «Օրմանեան ձեռքից բաց չէ թողնում այն թեմերը, որոնք կտրվելով Օրմանեան իշխանութիւնից»—պիտի կարդալ օսմանեան իշխանութիւնից։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յունիսի 4-ին, ցերեկվայ ժամը 3-ին, Վօկզալնի փողոցի այն տեղում, ուր կանգ է առնում էլեքտրաքարշը, Կամենսկի և Կիրիտչէվ վատմանները սկսում են կռուել, որի ժամանակ Կիրիտչէվը վէրք է հասցնում Կամենսկու պարանոցին։ Վէրքը վտանգաւոր չէ։

◆ Յունիսի 3-ին, Բարեատինսկի փողոցում անզգայ դրութեան մէջ բարձրացնում են մի անյայտ կնոջ և տանում հիւանդանոց, ուր և մեռնում է։ Դիակը կտրելով երեւում է, որ նա թունաւորել էր իրան կօրբօլեան թթւուտով։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Մայիսի 31-ին Ալէքսանդրօ-Նեվեան տաճարում հոգեհանգիստ է կատարվել Վրաստանի էկզարխ Նիկօնի մահվան պատճառով։ Հոգեհանգստին, ի միջի այլոց, ներկայ է եղել տեղական հայ-լուսաւորչական հոգեւորականութիւնը Զաւէն վարդապետի առաջնորդութեամբ։

◆ Քաղաքապետի կարգադրութեամբ 200 րուբլու տուգանքի է ենթարկվել «Բրիստօլ» հիւրանոցի տէր Թիւրքահպատակ Բամբակակին հիւրանոցում տեղի ունեցած սկանդալի մասին ոստիկանութեանը չը հաղորդելու համար։

◆ «Էլեքտրիչեսկայա սիլա» ընկերութիւնը մայիսի 1-ին Սպիտակ քաղաքի իր կայարանում բանւորական ժողով թոյլատրելու համար ենթարկված է 500 ր. տուգանքի։

◆ Փոխարքան թոյլատրել է Բագուի քաղաքային վարչութեանը մասնաւոր անձերից պարտք վերցնել թոյլատրված պայմաններով 675,000 րուբլի և պետական բանկից, գրաւ դնելով տոկոսաբեր թղթերը, 793,000 րուբլի։

◆ Մայիսի 31-ին Բագուից Եւլախ են գնացել քաղաքի ու ժամուլի ներկայացուցիչները և ուրիշ հրաւիրված անձինք՝ ներկայ լինելու Եւլախ-Նուխի աւտօմօբիլային հաղորդակցութեան բացման հանդիսին։

◆ Բագուի ձիաքարշի ակցիոներական ընկերութեան վարչութիւնը հաղորդել է քաղաքային վարչութեանը, որ մայիսի 27-ից ձիաքարշի երթեւեկութիւնը շարունակվելու է մինչև երեկոյեան $10^1/_2$ ժամը։

◆ Շոգերի պատճառով զովարար խմիչքների գործածութիւնը անհրաժեշտ է դառնում և ուստի գրաւել է նա քաղաքային սանիտարական բիւրօյի նոր կառավարիչ բժ. Վասիլեվսկու ուշադրութիւնը։ Իմանալու համար՝ թէ որքան համապատասխանում են նրանք առողջապահական պայմաններին՝ խիստ վերլուծութիւն է կատարված, որը երևան է հանել բացասական հետեւանքներ։ Պարզվել է, որ զելտերեան ջուրը, որ սովորական զտված խմելու ջուր է, բաւականաչափ գազ չունի։ Պարզվել է նաև, որ շիշի մէջ եղած բաղադրութիւնը չէ համապատասխանում իր էտիքետի ցուցումներին։ Քաղցր հեղուկները, որ այնքան սիրում են երեխաները, պարունակում են իրանց մէջ նոյնիսկ վնասակար մասնիկներ։ Այդ հանգամանքը դրդել է Վասիլեվսկուն հրաւիրել խառը ժողով բաղկացած բժիշկներից ու հանքային ջրեր պատրաստող գործարանատէրերից։ Վերջինները խոստացել են վերացնել այդ պակասութիւնները։ Սանիտարական բիւրօն խիստ հսկողութիւն է նշանակել այդ գործարանների վրա և մշակել է պարտադիր կանոններ նրանց համար։ («Б.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կարգադրել է Կիէվի ադմինիստրացիային «ազատ սիրոյ լիգայի» մասին հաւաքած իր բոլոր տեղեկութիւնները ներկայացնել այն քննիչին, որին մինիստրութիւնը ուղարկում է Կիէվ այդ հարցը պարզելու համար։ («Р. Сл.»)

◆ Լրագիրները հաղորդում են, որ Բեռլինում միապետների ունեցած տեսակցութեան հետևանքներից մէկը Միջին Ասիայի քաղաքականութեան և անգլիացիների կողմից Բելուջիստանում Կուշկայից մինչև Հերաթ երկաթուղի անցկացնելու մասին համաձայնութիւն կայացնելն է։ («П. К.»)

◆ Մօսկվայի համալսարանի ազատ ունկնդրուհիների մի խումբ որոշել է պատգամաւորուհիներ ուղարկել խնդրելու ժողովրդական լուսաւորութեան մինիստրին համալսարան ընդունելու մասին հրատարակված վերջին շրջաբերականը բոլորովին փոխել։ («Рѣчь»)

◆ Ֆինանսների մինիստրը մտադիր է տուրք նշանակել գրքերի հրատարակիչների վրա։ («П. К.»)

◆ Լուրերին նայելով, կամաւոր նաւատորմիղը տրվելու է առևտրի մինիստրութեան իրաւասութեան ներքոյ։ («П. К.»)

◆ Օդեսսայի նահանգական դատարանի կողմից կալանաւորների վաշտերը ուղարկվելու դատապարտված այն վեց գիւղացիները, որոնք մեղաւոր են ճանաչված Բրօդսկու կալուածքը հրդեհելու համար, Անանիէվսկի և Վալեցօգուլսկի սօցիալիստների յարուցած հեռագրական միջնորդութեան համաձայն ներումն են ստացել։

◆ Հեմերհօֆի համայնքը ենթարկված է 1000 րուբլի տուգանքի այն պատճառով, որ մի ինչ-որ անյայտ մարդ 1905 թւին պղծել է գաւառապետի և դրագունների գերեզմանները։ («Русь»)

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը նպատակայարմար է դատել թոյլատրել գիմնազիայի VIII և VI դասարանների ու ռէալական դպրոցների լրացուցիչ դասարանների աշակերտներին ցածր դասարանների առարկաների թւանշանները աւելացնելու նպատակով կրկին անգամ քննութեան ենթարկվել։ («О. Б.»)

◆ Ռուս-պարսկական սահմանագլխի ընդհարման առթիւ «Баку» լրագիրը հաղորդում է, որ Կվարտովկինի հրամանատարութեան տակ գտնվող պատժիչ զօրամասի կազմի մէջ եղած ռուս-օֆիցերների ասելով, Շիրին Սուի մօտ տեղի ունեցած ընդհարման ժամանակ, պարսիկները ցոյց են տուել, որ կարողանում են հիանալի կերպով կռւել, որ բաւականաչափ ծանօթ են զինւորական տաքտիկային և որ գըլխաւորն է ընդունակ են շրջանկատ լինել ծանր բօլեւներին և ցոյց սարքելով հակառակորդի ուշադրութիւնը բոլորովին հակառակ կողմ դարձնել ու յարմար վայրկեանը ծառայեցնել իրանց այս կամ այն գործողութիւնների համար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, 22 մայիսի

«Մշակի» № 98-ում մեր գրածի առթիւ «Վտակը» մի ամբողջ խմբագրական է նուիրել, ուր ի միջի այլ մարգարաշար հայհոյանքների հետեւեալ տողերն ենք կարդում մեր գրածի մասին. «անպատկառ ստերը, զրպարտութիւնները վարպետօրէն հաւաքված են այնտեղ՝ միամիտ ընթերցողների սրտում հակայեղափոխական, հակահամերաշխական տրամադրութեան ստեղծելու համար»։

Մօդա դարձած «զինիմի սէօյդի» (հաւատս հայհոյեց) դարձուածքը իր հայրենիքում—մահմեդական երկիրներում սկսել է իր ոյժը կորցրել և, որպէս մի թուլացած զէնք, այլ ևս չէ կարողանում ծառայել իր իսկական նպատակին. բայց եկէք տեսէք, որ մեր ազգասէրները իրանց օրհնական գալարումների ժամին ստիպված են այդ բթացած, գուլացած զէնքին դիմելու, «հակայեղափոխական, հակահամերաշխական» անուանելու այն ամենին, որոնց սուր սլաքները կարողանում են թափանցել իրանց կաշու ծալքերը։

Մենք ասում ենք, որ դուք հակահամերաշխական էք. փաստ էք ուզում. կարդացէք ձեր ձեռքերով գրած փաստաթղթերը արտասահմանի թերթերում հայ կուսակցութիւններին, ձեզ համերաշխութեան հրաւիրողներին։ Մենք ասում ենք, որ դուք յեղափոխականներ չէք, աւելի ճիշտը՝ դուք յեղափոխութիւնը սպանողներ էք, այո, հայ յեղափոխութիւնը, որի վերականգնման, վերակենդանացման համար այսուհետև հսկայական ջանքեր են հարկաւոր։ Առանց կարծելու, մի՞թէ դրա համար էլ փաստեր կուզէք…

Միլիօնաւորներից մէկը—գէհերցի Դաւիթը ցցված է ձեր առաջ. դեռ չէ չորացել անմեղ նահատակների արիւնը, դեռ անթաղ են դիակները… Դաւիթներին մենք յեղափոխական անուանենք. Դաւիթների սխրագործութիւնը յեղափոխութի՞ւն… կարդացէք Դաւթի թուղթիկը Ամերիկայի «Ազգ» շաբաթաթերթում. միացածն էլ նա կասէ ձեզ։ Այդպիսի արարքներ քննադատողին, կեղծիքներ մերկացնողին «հակայեղափոխական» անուն տալը մի՞թէ յանցանք չէ։

Շուր

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ Մարդ երբ նայում է Մադրասի (Հնդկաստանում) այժմեան հայերի վրա, տեսնում նրանց վիճակը և համեմատում է Մադրասում եղած անցեալ գաղութի հետ, մի խորին վիշտ է զգում։

18-րդ դարի ընթացքում և 19-րդ դարի սկիզբներին կային նշանաւոր հայեր, որոնք ունէին մեծ եռանդ աշխատասիրութեան և ազգային զօրեղ ոգի լայն ծրագիրների հետ։

Այժմ միանգամայն հակապատկերն է։

25—28 հայեր կան, որոնց մեծ մասը դատարկ կեանք է անցկացնում. ամսականներ են ստանում եկեղեցուց իբրև կենսաթոշակ, որով ներկայանում են կատարեալ ձրիակերներ։

Մի ժամանակ Մադրասի հայերն (Աղա-Պետրոս Ուսկան, Եդուարդ Ռաֆայէլ, Սամուէլ Մուրադ, Աղա-Շամիր Սուլթանեան և այլք) իրանց առատ նուիրատուութեամբ, ինքնաբեր բարեգործութեամբ նպաստում էին մեր ազգային հաստատութիւններին, ծաղկեցնում էին գրականութիւն, հաստատում էին ուսումնարաններ։ Մեր առաջին լրագիրը՝ «Ազդարար» հրատարակվեց Մադրասում, իսկ այժմ մի ցաւալի պատկեր է ներկայացնում եղած թափթփուկ հայոց կեանքը։

Ազգային դրամները, փոխանակ օգտակար կերպով գործադրվելու, վատնվում են մի խումբ ձրիակերների վրա, որոնք հայոց եկեղեցու և հայութեան հետ ոչ մի կապ չունեն այլևս, խորթացած են։

Արդարանում են նրանով, որ այդ գումարները կտակված են աղքատների համար և այլ կերպ ծախսել չէ կարելի… Հնդկական-անգլիական կառավարութիւնն էլ վաւերացրել է այդ ընթացքը։

Թող միւս փոքրաթիւ գաղութները տեսնեն այս ցաւալի վիճակը և օր առաջ լուրջ մտածեն ազգային-եկեղեցական դրամների ներկայ ու ապագայ արդիւնաւոր գործադրութեան մասին, որ այսպիսի տգեղ ու անպատուաբեր դրութիւն չը ստեղծվի։

(«Ն. Զ. Լուս.»)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ռաշտ, 30 մայիսի

Պարսկաստանը նորից ալեկոծվում է, մի քիչ լռութիւնից յետոյ կրկին փոթորկվում. մութ ամպեր են պատում, երկիրը մռայլվում է. քանի գնում աւելի է վատանում դրութիւնը։

Ամսիս 24-ին լուր է տարածվում, որ շահը մեծ զօրքով Թէհրանից դուրս է եկել և քաղաքին մօտիկ ամարանոցումն է գտնվում, իր ամբողջ ընտանիքով, իսկ քաղաքը շրջապատված է զօրքով, երթեւեկութիւնը կտրված է։ Շահը հրամայում է, որ մէջլիսը ցրվի։

Այստեղ ամիջապէս սկսվեցին շարժումները. ժողովուրդը հաւաքվեց հեռագրատուն, բողոքեց շահի դէմ։ Թէհրանի մէջլիսը յուսահատված օգնութիւն է խնդրում։ Նա հեռագրում է, որ դրութիւնը վատ և կրիտիքական է։

Նոյնպէս հեռագիր է ստացված շահից, որը ասում է. «Գիլանի ժողովուրդ, դուք հանգիստ եղէք. ես ոչ թէ մէջլիսը պիտի ցրեմ, այլ մի քանի խանգարիչներ պիտի պատժեմ». սակայն ժողովուրդը չէ հաւատում և աւելի է գրգռվում։ Հեռագրատան մօտ վրաններ են խփւում, միտինգներ են տեղի ունենում, հակակառավարչական ճառեր են խօսվում, որից յետոյ ազգային զինւորագրութիւն է բացվում, որպէսզի գնան Թէհրան մէջլիսին օգնեն։ Զինւորագրվում են, բայց թէ կարո՞ղ են գնալ ու մի բանի պէտք գալ—պատասխանը բացասական է… Զինւորագրվում են, բայց փող չը կայ, զէնք և ռազմամթերք չը կայ, սակայն ճառախօսները ասում են, որ Էնզէլիում կառավարութիւնը մեծ քանակութեամբ զէնք և ռազմամթերք ունի, որը անջումանը արդէն գրաւել է և պիտի բաժանէ ազգային կամաւոր զինւորներին։ Խօսվում է շուտով մեծ գումարներով փող հաւաքել նոր զինւորների համար. վերջապէս մի խոշոր իրարարանցում, ուրիշ ոչինչ։

Տեղիս դատաւոր Զաիր Դովլէն իրան ցոյց է տալիս, որպէս թէ անկեղծ, հաւատարիմ է սահմանադրութեան, սակայն չէ իմացվում թէ նա իսկապէս ինչ է… մինչև անգամ իր 17 տարեկան որդուն էլ զինւորագրել է տուել…

Երեկվանից Թէհրանից ճիշտ լուր չէ ստացվում. հեռագիրներին պատասխան չը կայ, որի պատճառով ժողովուրդը ալեկոծվում է։ Հետևանքի մասին յաջորդ պօստով։

Յ. Յարութիւնեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

3 և 4 յունիսի

ՄՕՍԿՎԱ։ Վաճառականական ընկերութիւնը վաճառական Տիտօվի այրուց ստացաւ 700,000 րուբլի արժեցող երկու կայք և 100,000 րուբլու օբլիգացիաներ խուլ ու համրերի համար ապաստարան կառուցանելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսական մասնաժողովը ընդունեց մաքսատան տուրքերի վարչութեան ելմուտը Դումայից ընդունված թւերով, նաև ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան արտակարգ ծախքերի ելմուտը և մինիստրների խորհրդի դիւանատան ելմուտը։

Պետական պաշտպանութեան դումայական մասնաժողովը, բիւջէտային չորրորդ փոխ-մասնաժողովի հետ միասին, որոշեց այս տարի զինւորական և ծովային վարչութիւնների մի քանի պէտքերի համար յատկացնել 92 միլիօն րուբլի։

Ուղղափառ եկեղեցու գործերի մասնաժողովը որոշեց, որ քահանայական կարգից զրկված քահանաները զրկվում են ընտրողական իրաւունքից։

Դումայական ֆինանսական մասնաժողովը երկու տարով հաստատեց արտասահմանից ծովային առևտրական նաւեր անմաքս բերել տալու օրինագիծը։

ՎԱՐՇԱՎԱ։ Զինւորական դատարանը Մէժերիչէ կայարանի վրա յարձակվողներից երեքին դատապարտեց մահվան պատժի։

ՄՕՍԿՎԱ։ Քաղաքային վարչութեան և Լօնդօնի Վէրինգ եղբայրների, Լիօնի վարկային ընկերութեան միջև, Լօնդօնի Օֆէյնէյմ գլխաւոր ֆիրմայի միջոցով, ստորագրվեց 30—40 միլիօն րուբլու $15^0/_0$-ային օբլիգացիաների քաղաքային նոր փոխառութիւնը։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Եկան միջազգային նաւագնացութեան կօնգրէսի անդամները։

Արտաքին

3 և 4 յունիսի

ՎԻԵՆՆԱ։ Պարիզ մեկնեց եգիպտական խեդիվը։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատը երկրորդ ընթերցումով ընդունեց ծերութեան ապահովման օրինագիծը։

ԵՒՊԱՏՕՐԻԱ։ Սէզօնը բացվեց։ Տիֆային հիւանդութեան մասին տարածված լուրերը միանգամայն անհիմն են։ Հիւանդների թիւը մեծ է։

ԼԻՍԱԲՕՆ. Ռուսաց դեսպան Կօեանդէրը յունիսի 3-ին Մանուէլ թագաւորին յանձնեց Անդրէյ Նախակոչի շքանշանները։ Ճաշի ժամանակ, ուր ներկայ էր և Կօեանդէրը, թագաւորը խմեց Կայսրի կենացը։

ՍՕՖԻԱ։ „Вечерная Почта“ լրագրի տեղեկութիւնների համաձայն, ներքին գործերի մինիստրը Սանդանսկուց և նրա համախոհներից մի քանի նամակներ է ստացել, որոնցով յեղափոխական կազմակերպութիւնը, մահվան սպառնալիքի տակ, առաջարկում է մինիստրին պետական ծառայութեան ընդունել Սանդանսկու բարեկամներից մի քանիսին։ Մինիստրը պատուիրագրել է խիստ քննութիւն սկսել և ձերբակալել Բօլգարիայում ապրող հրոսակախմբերի բոլոր մասնակցողներին։

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ։ Յունիսի 3-ին տեղի ունեցաւ դանիական Գարալդ պրինցի նշանադրութեան հանդէսը Ֆրիդրիխ Շլէյզվինգօլ դուքսի դստեր Ելենայի հետ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Գուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—$12^1/_2$ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Մեկնեց կովկասեան հանքային ջրերը և անցեալ տարիների նման ընդունելու է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Ռոսսիա»։
(ա. օ.) 100—64

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
վերսկսեց ընդունելութիւն
Ներքին եւ Ջղային
Հիւանդների
Պեատիգօրսկում, Վերևի բուլվար № 14. տ. իշխ. Գիրէի, Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—11

ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՈՆ
եւ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի
ամառային զբաղմունքները վերսկսվում են յունիսի 5-ին. պատրաստում են մանուկներին բոլոր դպրոցների համար։
3—3

ՄԱՆԹԱՇԵԱՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ
Հիմնված Թիֆլիսի առեւտր. ընկերութիւնից
Պատրաստական (հանրակրթական) դասարանում ընդունվում են առանց քննութեան այն տղաները, որոնք կը ներկայացնեն վկայական իրանց դասընթացքն աւարտելու մասին միդասեանից ոչ ստորին, իսկ առաջին դասարան ընդունվում են երկդասեան քաղաքային կամ գիւղական դպրոցներում աւարտածները, կամ թէ համապատասխան քննութիւն տուողները։
Ընդունելութեան քննութիւններ լինելու են յուլիսի 3-ին և 4-ին, առ. 9 ժամից։
Ուսման վճարն է 15 ր. կիսամեակի համար։ Խնդիրների ընդունելութիւնը և տեղեկութիւնների տալը տեղի են ունենում ամեն օր Թիֆլիսի առևտրական դպրոցի դիւանատանը, ցերեկվայ 9 ժամից մինչև 1 ժամը և պօստով։
Դպրոցը գտնվում է Թիֆլիսի առևտրական դպրոցի շինութեան մէջ։
(ու. կ.) 6—6

Մամուլի տակից լոյս տեսաւ և վաճառ է հանված
ՐԱՖՖԻԻ
ԽԵՆԹ
Պատմական վէպի ռուսերէն թարգմանութիւնը
1877—78 թւերի ռուս-թիւրքական շրջանից
հայերէնից թարգմանեց
Հ. Մ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ
Հրատարակութիւն երկրորդ
Հրատարակութեան պահեստ է Թիֆլիսում, «ՓԱՐՈՍ» գրավաճառական կիօսկում։
(օ. մ.) 3—3

Ս. ԴԷՄՈՒՐԵԱՆ
„ՔՆԱՐ“
Ժողովրդական երգարանը (Եւրոպական նօտաներով)
Վաճառվում է «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութներում, նաև կարելի է դիմել՝ Моздокъ, Терск. обл., Степану Демурянъ.
Գինն է 1 րուբլի
(24, 29, յ. 3, 8, 13) 5—4

ԱԴՕԼՖ ՌՈՒԴԷ
Ժողովրդական դպրոցի
ՄԵԹՕԴԻԿԱ
Փոխադրեց գերմաներէնից
Յովհաննէս Տէր-Միրաքեան
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ներածութիւն. Պատմութեան նախաշաւիղների ուսուցումը. Պատմութեան ուսուցումը. Աշխարհագրութեան ուսուցումը. Բնագիտութեան ուսուցումը. Հայոց լեզուի ուսուցումը. Թւաբանութեան ուսուցումը. Երկրաչափութեան ուսուցումը. Ձեւքանական ճշմարտութիւններ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Կազմված՝ 1 ր. 90 կ.
Դիմել, Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“. Г. И. Галустяну.
Գրախանութի ցուցակը ցանկացողներին ուղարկվում է ձրի։
(չ. ու. ե.) 10—9

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում ծախվում են Խան-Ազատի հետեւեալ աշխատութիւնները.
1) «Ինչ է սահմանադրութիւնը» 10 կ.
2) Ալֆրեդ դը Միւսէ, «Տիցիէնի որդին» (թարգմ. ֆրանս.), վէպ 20 կ.
3) Կաուցկի, «Ներկայացուցչական կառավարութիւն», (թարգմ.) 40 կ.
4) «Դաշնակցութիւնը և իր ղեկավարները» 15 կ.
5) «Յիշողութիւններ Խրիմեանի մասին» 20 կ.
(օ. մ.) 5—5

Типографія „Экономія“ Авака Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская ул., № 3.